

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԲԵԿԱՆԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Դեկտեմբեր 10-ին Միացեալ Նահանգներու դաշնակցային վերաքննիչ դատարանը փոխելով իր նախկին որոշումը եկաւ հաստատելու թէ, Օսմանեան ժամանակաշրջանին թուրքերը մէջ ի գործ դրուած Հայկական Յեղասպանութեան զոհերու ժառանգորդները իրաւունք ունին հատուցում ստանալու այն ընկերութիւններէն, որոնք իրենց հարազատներուն վաճառած են կեանքի ապահովագրութիւն:

Միացեալ Նահանգներու 9-րդ շրջանային վերաքննիչ դատարանը, որու կեդրոնն է Սան Ֆրանսիսքո քաղաքը, վճռեց, որ Քալիֆորնիա նահանգի օրէնքը՝ Հայոց Յեղասպանութեան մասին, չի հակասեր Ամերիկայի արտաքին քաղաքականութեան:

Անցեալ տարի նոյն դատարանը որոշած էր, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը պաշտօնապէս չէ ճանչցած Յեղասպանութիւն եւ հետեւաբար, Քալիֆորնիոյ նահանգային օրէնքը, որ 1915-ի դէպքեր կը նկատէր Յեղասպանութիւն, կը հակասէր դաշնակցային կառավարութեան արտաքին քաղաքականութեան:

Դատարանի այս նոր որոշումը անակնկալ էր նոյնիսկ հայկական կողմի փաստաբաններուն հա-

մար: «Կատարուածը անսպասելի էր: Հայ ժողովուրդի համար մեծ յաղթանակ է», - յայտարարեց փաստաբան Պրայըն Քաբաթէք:

Իր նոր որոշումին մէջ դատարանը կու գայ եզրակացնելու որ, չկայ յստակ ընդգծուած Դաշնակցային քաղաքականութիւն, որ կ'արգիլէ նահանգներուն օգտագործել «Հայոց Յեղասպանութիւն» եզրը:

Դատարանը նաեւ որոշած է, որ ապահովագրական ընկերութիւնները կրկին անգամ կրնան դիմել դատարան եւ լուծմանը պահանջել նոյն այս հայցով: Անոնք կրնան դիմել նաեւ Միացեալ Նահանգներու Գերագոյն Դատարան:

Դատարանի այս որոշումով կը վերակենդանանայ Յեղասպանութեան զոհերու ժառանգորդներու դատը՝ ընդդէմ գերմանական ապահովագրական ընկերութիւններուն:

Վերջին տարիներուն, խումբ մը Հայ փաստաբաններ նման դատեր բացած էին Ամերիկեան «Նիւ Եորք Լայֆ» եւ Ֆրանսական «Աքսա» ապահովագրական ընկերութիւններուն դէմ եւ չաջողած էին Յեղասպանութեան զոհերու իրաւաջաջորդներուն ապահովել՝ 37,5 մլն տոլարի հատուցում:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ ցեղասպանութեան նուիրուած գիտաժողովի ընթացքին

Երեքշաբթի, Դեկտեմբեր 14-ին Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան կազմակերպութեամբ, Երեւանի մէջ սկսաւ ցեղասպանութեան վերաբերեալ երկօրեայ միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի բացումը կատարելով Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան ըսաւ. - «Նախկինում իրագործուած ցեղասպանութիւնների համար քաղաքական տարբեր վարչակազմերի ու պետութիւնների անպատիժ մնալու, միջազգային հանրութեան կողմից չդատապարտուելու հանգամանքները չանգեցրել են նրան, որ մարդկութիւնը դեռեւս բախուած է նոր ցեղասպանութիւնների իրականացման սպառնալիքի հետ»:

«Հայոց Յեղասպանութեան դառը դասերը մարդկութեան պատմութեան եւ յիշողութեան մէջ շմնացին որպէս լուրջ անցեալի յուշեր, դրանց լրացնելու եկան Հոլոքոստի սարսափները, Ռուսաստանի, Տարֆուրի եւ բազմաթիւ այլ ողբերգութիւններ: Յաւօք, ժխտողականութիւնն ու ցեղասպանութեան ուրացումը դեռեւս շարունակուած են տեղ գտնել մեր աշխարհում», - աւելցուց ան:

Իր հերթին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտնեց, որ հակառակ 20-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ միջազգային հանրութիւնը որոշ յառաջընթաց ար-

Շարք էջ 4

ՑԵՂԱԿԱՆ ԴԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ԶԱՍԱԶԱՅՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՄԱՍԱՄԲ ԱԶԱՏ ԵՆ



Աշոտ Մելիքեանը (աջից) եւ Վարդան Գեւորգեան լրագրողներու հետ հանդիպման ընթացքին

Խօսքի Ազատութեան Պաշտպանութեան Կոմիտէի կազմակերպած մէկ հետազօտութեան համաձայն, Հայաստանի զանգուածային լրատուամիջոցները (ԶԼՄ) միայն մասամբ ազատ են:

Դեկտեմբեր 13-ին կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Խօսքի Ազատութեան Պաշտպա-

նութեան Կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեան տեղեկացուց, որ հետազօտութիւնը իրականացուած է միջազգային Freedom House կազմակերպութեան կիրառած մեթոտաբանութեան հիման վրայ, սակայն յարմարեցուած հայաստանեան պայ-

Շարք էջ 4

ՎԱԲԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ԶԵՂԻՆԱԿ ՄԱՅՔԸԸ ՅԱԿՈՒԲԵԱՆ ՄԱՐԱՑԱԻ 97 ՏԱՐԵԿԱՆԻՆ

Ամերիկահայ բեմադրիչ Մայքըլ Յակոբեան, որու պատրաստած մօտ 70 վաւերագրական եւ ուսումնական ֆիլմերը արժանացած են աւելի քան 160 մրցանակներու, ներառեալ երկու «Էմմի» մրցանակներու թեկնածութեան, մահացաւ Դեկտեմբեր 10-ին, Լոս Անճելըսի մօտակայ թաուզընտ Օքս քաղաքին մէջ, 97 տարեկան հասակին:

Յակոբեան Եղեռնէն վերապրող էր եւ իր ամբողջ կեանքը նուիրեց Յեղասպանութեան տեսողական վաւերագրութեան: Աւելի քան 40 տարիներու վրայ երկարող ժամանակաշրջանին, Յակոբեան նկարահանեց մօտ 400 հարցազրոյցներ՝ Եղեռնէն վերապրողներու հետ, արխիւի վերածելով անոնց ականատեսի վկայութիւնները: Այս նպատակով ան այցելեց աշխարհի տարբեր երկիրներ ու 10 լեզուներով նկարահանեց այդ հարցազրոյցները: 1979 թուականին Մայքըլ Յակոբեան հիմնեց Հայ Ֆիլմի



Բեմադրիչ Մայքըլ Յակոբեան

Հիմնարկութիւնը, որպէս կրթական եւ մշակութային կազմակերպութիւն, պատրաստելով հայութեան կեանքին նուիրուած վաւերագրական ժապաւէններ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԳԱՐԸ ԿԱՐԳԱԴՐԵԼ Է ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾ ՅԱՐՈՒՑԵԼ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Ազգային ժողովի Մարզու իրաւունքների պաշտպանութեան եւ հանրային հարցերի յանձնաժողովի փոխնախագահ Ռաֆիկ Պետրոսեանի փոխանցմամբ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը կարգադրել է քրէական գործ յարուցել Երեւանի քաղաքապետ Գաբրիէլ Բեգլարեանի նկատմամբ՝ նախագահի արարողակարգի բաժնի աշխատակից Արամ Կանդաեանի ծեծի եւ առեւանգման կապակցութեամբ:

«Նախագահ Սարգսեանը ոչ միայն հարկադրել է, որպէսզի քաղաքապետը, որը իրեն բարձր էր դասել օրէնքից, սոցիի ենթարկուի, այլ նա նաեւ ազատուեց աշխատանքից», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Սերժ Սարգսեանի գլխավորած Հանրապետական կուսակցութեան պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեանը՝ յաւելելով. - «Բայց դեռեւս լուծուած չէ նրան դատի տալու հարցը: Որքան ինձ յայտնի է, Հանրապետութեան նախագահը կարգադրել է նաեւ քրէական գործ յարուցել, որովհետեւ քաղաքապետի գործողութիւններում կար Քրէական օրէնսգրքով հետապնդուող 3 արարք. ծեծը, որի հետեւանքով թեթեւ վնասուածք է ստացել տուժողը, եւ առեւանգումը»:

Երեւանի քաղաքապետ Գաբրիէլ Բեգլարեանը հրաժարական տուեց այն բանից յետոյ, երբ մամուլում լուրեր տարածուեցին այն մասին, որ նա առեւանգել եւ ծեծի է ենթարկել Արմէն Կանդաեանին,

«ԴՐԱԿԱՆ ԿԸ ԼԻՆԻ, ԵԹԷ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՂՆԻ-ՅԵՌԱՆԱՅ».- ՎԱՅԱԳՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

ՀԱԿ-ի անդամ Վահագն Խաչատրեանն լրագրողների հետ հանդիպման ժամանակ սենսացիա համարեց նախորդ շաբաթ տեղի ունեցած Երեւանի քաղաքապետ Գաբրիէլ Բեգլարեանի եւ արդարադատութեան նախարար Գէորգ Դանիէլեանի պաշտօնակազմի թիւները:

«Այն, ինչ տեղի ունեցաւ աւագակապետութեան պայմաններում, սովորական երեւոյթ չէր: Սա դեռ առաջին ծաղիկն է: Մի երկրում, որտեղ պաշտօնեաներն իրենց օրէնքից վեր են դասում, ամէն օր նման դէպք կարող է լինել: Գաբրիէլ Բեգլարեանն աւագակապետութեան սիւներից մէկն էր, սակայն այդ հրաժարականը օրէնքի տառը պահպանելով տեղի չի ունեցել, այլ աւագակապետութեան գործող նորմերի շրջանակներում», - ընդգծեց Խաչատրեանը:

Ըստ նրա՝ որեւէ դրական բան չկայ Սերժ Սարգսեանի այդ գործողութիւնների մէջ: Դրական կը լինի այն, որ այս իշխանութիւնը թողնի-հեռանայ:

Վահագն Խաչատրեանի ընդդիմախօս, ՀՀԿ պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեանը նշեց, որ եթէ պաշտօնեաների կողմից նմանատիպ արարքները շարունակուեն, ապա հրաժարականների ալիքը նոյնպէս կը շարունակուի: Ըստ նրա՝ Սերժ Սարգսեանը վճռական է, եւ այսուհետ շարքային քաղաքացիներին վիրաւորողներն էլ կը պատժուեն:

Պետրոսեանի խօսքերով, Սերժ Սարգսեանը Գաբրիէլ Բեգլարեանի արարքը ոճմակային գործողութիւն է համարել: Նա գաղտնիք պատմեց՝ նշելով, որ արարքն այս-

քանի որ Դեկտեմբերի 3-ին Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրում օպերային երգիչ Պլասիդո Դոմինգոյի համերգից առաջ Կանդաեանը խնդրել է նախագահ Սերժ Սարգսեանի համար նախատեսուած աթոռի հարեւանութեամբ նստած Գաբրիէլ Բեգլարեանի կողմը փոխել իր տեղը:

Հայաստանի նախագահի մամուլի խօսնակը հաստատել էր, որ քաղաքապետը ծեծի է ենթարկել նախագահի աշխատակազմի ներկայացուցչին, սակայն յաւելել էր, որ «մամուլը չափազանցել է» լուրերը եւ առեւանգում տեղի չի ունեցել:

Աժ Մարզու իրաւունքների պաշտպանութեան յանձնաժողովի փոխնախագահ Ռաֆիկ Պետրոսեանը նշեց, որ հետաքննութիւն պէտք է անցկացուի:

Աւելի ուշ նախագահ Սարգսեանի մամուլի խօսնակ Արմէն Արզումանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հերքեց քրէական գործ յարուցելու կարգադրութեան մասին տեղեկատուութիւնը:

«Քրէական գործերը նախագահի ցուցումով չեն յարուցւում, դրանց օրէնսդրական հիմքերը յայտնի են, եւ Ռաֆիկ Պետրոսեանը այն մարդը չէ, ով լիազօրուած է նախագահի ցուցումների մասին տեղեկացնել հանրութեանը», - ասաց Արմէն Արզումանեանը՝ յաւելելով. - «Բնականաբար նման ցուցում չկայ»:



ՀԱԿ-ի անդամ Վահագն Խաչատրեան

պէս է որակուել, քանի որ Բեգլարեանը ոչ թէ միայնակ, այլ խմբով է ծեծել նախագահի արարողակարգի բաժնի աշխատակցին:

Ըստ Պետրոսեանի, Սերժ Սարգսեանը նման հարցերի նկատմամբ հետեւողականութիւն է ցուցաբերել ինչպէս նախկինում, այնպէս էլ կը ցուցաբերի ապագայում: Որպէս օրինակ, նա պատմեց նաեւ մէկ այլ գաղտնիք, նշելով, որ նախկին ոստիկանապետ Հայկ Յարութիւնեանն էլ Մարտի 1-ի դէպքերից յետոյ ազատուեց աշխատանքից՝ սխալ գէնք բաժանելու համար:

«Ճիշդ է, անունը դա չգրուեց, բայց էդ պատճառով էլ ազատուեց», - ասաց նա՝ հերքելով նաեւ մամուլի հրապարակումներն այն մասին, թէ ինքն ասել է, որ Սերժ Սարգսեանի հրահանգով քրգործ կը յարուցուի Բեգլարեանի նկատմամբ:

«Ես նման բան չեմ ասել: Եթէ կողմերը հաշտուել են, գործը հրաժարականով կը փակուի, քրգործ չի յարուցուի», - նշեց նա:

ՔԱՂԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՆ ԱԶԱՏ Կ'ԱՐՉԱԿՈՒԵՆ, ԲԱՑԱՌՈՒԹԵԱՍԲ ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԵՒ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ

«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանի կարծիքով, վաղաժամկէտ ազատ արձակումը կը կիրառուի բոլոր քաղաքատարկեալների նկատմամբ, բացառութեամբ Նիկոլ Փաշինեանի եւ Սասուն Միքայէլեանի:

«Այսօր Դեկտեմբերի 10-ն է, ես շատ կը ցանկանայի, որ մեր քաղաքատարկեալ ընկերները բանտերից դուրս եկած լինէին, իրենց էլ շնորհաւորէիք», - ասաց նա:

Սակայն Կարապետեանը դեռ չգիտի, թէ քաղաքատարկեալների վաղաժամկէտ ազատ արձակումը եւ փոփոխութիւնները տեղի կունենան մինչեւ տարուայ վերջ, թէ՞ աւելի ուշ:

Մէկ այլ ասուլիսի ժամանակ Հէլսինքեան քաղաքացիական ասամբլյայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաբունցը նոյնպէս անդրադարձաւ այս թէմային: Ըստ նրա՝ քաղաքատարկեալների վաղաժամկէտ ազատ արձակումը քաղաքական որոշում է, քանի որ արդարադատութիւնը երկրում չի գործում:

«ՀՐԱՊԱՐԱԿ». ԵՐՐՈՐԴՄԱՍՑԻ ԼԻՈՎԻԿԸ, ԶԷՅԹՈՒՆԻ ԷԴՈՆ, ԷՐԵՐՈՒՆՈՒ ԱՐՏԻՈՍԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՆ ՏԱՐՈՒԵԼ

«Հրապարակ»-ը գրել էր, որ անցած շաբաթ մայրաքաղաքի մօտ 300 հեղինակութիւններ հաւաքուել են էրեբունու «Արգիշտի» ռեստորանում: Հաւաքի նախաձեռնողը եղել է էրեբունու նախկին թաղապետ Մհեր Սեդրակեանը, իսկ նպատակը պայմանաւորուածութիւն ձեռք բերելն է եղել՝ համատեղ դիմագրուել առաջիկայ մարտահրաւերներին: Մասնակցել են Հովիկ Աբրահամեանը, Գաբրիէլ Բեգլարեանը, Սամուէլ Ալեքսանեանը, Ռուբէն Հայրապետեանը, էդուարդ Մաղաթեանը եւ ուրիշներ:

Այդ հանդիպումից անցել է մօտ մէկ շաբաթ: «Մենք տեղեկացանք, որ ոստիկանութեան տարբեր բաժիններ, ճորջ վարչութիւն, քրէական հետախուզութիւն են հրաւիրուել հաւաքի մօտ 50 մասնակիցներ, նրանց թւում՝ երրորդ մասցի Լիովիկը, Զէյթունի էդոն, էրեբունու Արտիոսը, Նորքի մասիվի Հակը, Վահանն ու Ժիրոն, Արաբկիրից՝ Տուն, Կոմայգու Սե-



«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան

«Այս ճնշման հետեւանքով իշխանութիւնն այնքան թոյլիկ է, այնքան անկամ է, որ ստիպուած է նման որոշում կայացնել: Բայց հաստատ իմացէք, ես խորը կասկած ունեմ, որ Նիկոլ Փաշինեանի եւ Սասուն Միքայէլեանի վերաբերեալ նման բան անեն, նման համարձակութիւն ունենան, որովհետեւ իրենք դրանից վտանգ են զգում իրենց թոյլ իշխանութեան նկատմամբ», - ասաց նա:

փիկը, Տրամուկի պարկի Ղազարը, Անդրանիկ Մարգարեանի սանիկ Պիտտ Արմէնը եւ ուրիշներ: Իւրաքանչիւրին 4-5 ժամ պահել են եւ հետաքրքրուել նշուած հաւաքով: Բնականաբար, ոչ մի արձանագրութիւն չի կազմուել, եղել են բանաւոր զրոյցներ: Ոմանց անգամ ուղիղ հարցեր են տուել՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գովքն էք արե՞լ, նախագահի դէմ ինչ-որ բան էք ծրագրե՞լ, Մհերի՞ն էիք փառաբանում: Հեղինակութիւնները սազանատու են որպէս իրենց «ախպերութեան» դէմ ուղղուած քայլ եւ վստահ են, որ հաւաքի մասնակիցներից ինչ-որ մէկը մտել է նախագահի մօտ եւ «մուտիտ» արել: Ընդ որում, սա աւելի շատ հաւանաբար ուղղուած է Թոխմախի Մհերի դէմ: Հիմա հեղինակութիւնները զբաղուած են իրենց թշնամուն յայտնաբերելու գործով: Իսկ թէ ով կարող էր ուղիղ մտնել Սերժ Սարգսեանի մօտ՝ դժուար չէ կուսակցի», - նկատում է թերթը:

ՀԱԿ-Ը ՈՐՈՇԵԼ Է ՊԱՏԺԵԼ ՄԱՐՏԻ 1-Ի ԳՈՐԾԵՐՈՎ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ԴԻՍՈՂՆԵՐԻՆ

Հայ ազգային կոնգրէսը հանդէս է եկել իւրօրինակ նախաձեռնութեամբ՝ փորձելով պատժել այն անձանց, ովքեր Մարտի 1-ի քրգործերով կեղծիքների են դիմել:

Ինչպէս լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց ՀՀԾ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը, իրենք աշխատանքներ են տանում, որպէսզի Եւրոպական երկրներ եւ ԱՄՆ մուտքի վիզաներ չտրամադրուեն Մարտի 1-ի գործերով կեղծ ցուցմունքներ տուած ոստիկաններին, կեղծ վճիռներ կայացրած դատաւորներին, կեղծ մեղադրանքներ պաշտպանած դատախազներին:

«Եղել են դէպքեր, երբ ԱՄՆ-ն կամ Եւրամիութիւնն արգելել են յանցագործներին, մարդու իրաւունքները ոտնահարողների

մուտքն իրենց երկրների տարածք: Քաղաքատարկեալ տերմինի ճանաչումը արդէն իսկ նշանակում է, որ մարդիկ յայտնուել են բանտերում ոչ թէ յանցագործութիւն կատարելու, այլ քաղաքական գործունէութեան համար: Դա նշանակում է, որ քաղաքական կամքն արտայայտելու համար մարդը որակուել է որպէս յանցագործ», - նշեց նա:


Ըստ Մանուկեանի, իրենք հիմնուելու ենք բոլոր այն միջազգային կառույցների գնահատականների վրայ, որոնք հաստատել են, որ Հայաստանում քաղաքատարկեալներ կան:

Միաժամանակ, ՀՀԾ վարչութեան նախագահը նշեց, որ այդ ցուցակում չպէտք է յայտնուի ոեւէ անմեղ մարդ:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԳՉՈՒՅԻ ԷՄՍԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՅԱՅԱՍՏԱՆԸ «ԵԻՐԱՏԵՍԻԼ 2011»-ԻՆ

«Եւրատեսիլ 2011»-ն երգի մրցույթում Հայաստանը կը ներկայացնի երգչուհի Էմմին: Սա Հայաստանի հանրային հեռուստաընկերության գեղարուեստական խորհրդի որոշումն է:



Երգչուհի Էմմի

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ալեքսան Յարուսթիանյանը այս որոշման առթիւ հրաւիրուած ասուլիսում լրագրողներին տեղեկացրեց, որ այս տարի նախատեսուած է անցկացնել ոչ թէ երգչի, այլ՝ երգի մրցույթ, որը բաց է այսօրուանից ինչպէս Հայաստանի կոմպոզիտորների, այնպէս էլ արտասահմանեան:

«Յետոյ մեր գեղարուեստական խորհուրդը կ'ընտրի այն երգերը, որոնք չափանիշներին կը համապատասխանեն, եւ հեռուստառադիոյի դատին կը ներկայացնի: Կարծում եմ՝ ուղիղ եթերում քուէարկութեան ժամանակ կ'ընտրուի այն երգը, որը պէտք է էմին ներկայացնի Գերմանիայում», - նշեց Յարուսթիանյանը:

Երգչուհի Էմմին եւ Միհրանը համարուած էին Եւրատեսիլում Հայաստանը ներկայացնելու հիմնական յաւակնորդը նաեւ 2010 թուականին, սակայն Հանրային հեռուստաընկերության կողմից ուղիղ եթերում անցկացուած նախընտրական փուլի արդիւնքում յաղթող ճանաչուեց երգչուհի Եւս Ռիվասը:

ՄՈՍԿՈՒՎՅՈՒՄ ՍՊԱՆՆՈՒԵԼ Է ՅԱՅ ԳՈՐԾԱՐԱՐԸ

Մոսկուայի կենտրոնում Indiviti ավտոմեքենայի մէջ յայտնաբերուել է հայազգի գործարար Արա Խաչատրեանի մարմինը՝ հրազէնային վնասուածքով, հաղորդում են ռուսական լրատուական կայքերը եւ յղում անելով տեղի իրաւապահ մարմիններին՝ տեղեկացնում, որ գործարարը սպանուել է գլխին ստացած հրազէնային վնասուածքից: Դէպքը տեղի է ունեցել դեկտեմբերի 10-ին ժամը 19-ի սահմաններում, յարուցուել է քրէական գործ:



Մոսկուայի մէջ Սպաննուած գործարար Արա Խաչատրեանի մարմինը՝ ինժեներ Մէլ Կոնստանտինովի մարմինը:

ուել եւ մինչեւ այժմ ղեկավարուած է հայազգի գործարար, ծնունդով արցախցի Արթուր Վարժապետեանի կողմից եւ Ռուսաստանում ալկոհոլային խմիչքների առետրով զբաղուող խոշորագոյն ընկերութիւններից մէկն է, որն այս շուկայում է 1993թ.-ից: Ընկերութեան պորտֆելում կան շուրջ 1500 անուն ալկոհոլային խմիչքներ, այդ թւում հայկական եւ ֆրանսիական գինիներ եւ կոնեակներ:

Արա Խաչատրեանը եղել է ալկոհոլային խմիչքների դիստրիբուցիայով զբաղուող «Լուդինգ» ընկերության Մանկա-Պետերբուրգի մասնաճիւղի ղեկավարը: Ռուսական որոշ լրատուամիջոցները չեն բացառում պատուէրով սպանութեան վարկածը:

Նշենք, որ «Լուդինգ» ընկերութիւնների խումբը հիմնադր-

ՅԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒՄԻՋՈՑՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

մաններուն:

Freedom House-ի հետազոտութիւնը հիմնուած է անկախ մասնագէտներու կարծիքներու հիման վրայ, իսկ Խօսքի Ազատութեան Պաշտպանութեան կոմիտէն դիմած է քաղաքական տարբեր թեւերու յարող հայաստանեան 50 լրատուամիջոցներու ղեկավարներու եւ լրագրողներու տեսակէտներուն:

Այս տարու ընթացքին հրապարակուած Freedom House-ի գեկոյցի համաձայն, Հայաստանի լրատուամիջոցներու ազատութիւնը գնահատուած էր 66 միակոր, ինչ որ կը նշանակէ թէ, հայաստանեան լրատուամիջոցները կը դասուելին «ոչ ազատ»:

«Մեր հետազոտութեան տուեալներով այդ միակորը կազմեց 58,64: Հայաստանեան լրատուամիջոցները մասամբ ազատների եւ ոչ

ազատների եզրագծին գտնուող վիճակում են, այսինքն դեռ մասամբ ազատ են, բայց շատ վտանգաւոր եզրագծում են, կարող են անցնել ոչ ազատների շարքը՝ համաձայն մեր փորձագէտների գնահատականների», - ըսաւ Աշոտ Մելիքեան:

Հետազոտութեան շրջագիծէն ներս, հայաստանեան լրատուամիջոցներու ներկայացուցիչները իրենց գնահատականը տուած են, թէ իրաւական, քաղաքական ու տնտեսական առումներով, որքանով ազատ են լրատուամիջոցները: Ըստ ամփոփուած կարծիքներուն, հայաստանեան լրատուամիջոցներու ազատութիւնը ամէնէն աւելի սահմանափակող տնտեսական պատճառներն են: Եթէ իրաւական ու քաղաքական առումներով ԶԼՄ-ները գնահատուած են «մասամբ ազատ», ապա տնտեսական առումով՝ «ոչ ազատ»: «Այդ բեռը, որի տակից չեն

ՎՐԱՍՏԱՆԸ ՄՏԱՅՈՂՈՒԱԾ Է ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՆՆԻԿԱՅՈՎ

Վրաստանը մտահոգուած է Հայաստանին Ռուսաստանի կողմից ռազմական մատակարարումների աւելացման առնչութեամբ: Այս մասին ասուում է Wikileaks կայքում հրապարակուած Թբիլիսիում ԱՄՆ դեսպան Ջոն Բասի դիւանագիտական հեռագրում:

«Վրաստանը նոյնպէս մտահոգուած է Հայաստանին Ռուսաստանի կողմից 2010-ին նախատեսուած ռազմական մատակարարումների աւելացմամբ, նախեաւ առաջին շնորհիւնների տեղափոխմամբ: Չնայած Վրաստանը շարունակում է Հայաստանի հետ լաւ յարաբերութիւններ պահպանել, սակայն չի կարծում, որ Հայաստանը կա-

րող է այդ մատակարարումներն օգտագործել ինքնուրոյն: Վրաստանը մտավախութիւն ունի, որ այնպիսի սպառազինութիւնը, ինչպիսին է ինքնաթիռների համար նախատեսուած ռազմամթերքը, կարող է օգտագործուել ոչ թէ երկրի բանակի կողմից, այլ՝ Հայաստանում ռուսական ուժերի:

Դրա հետ մէկտեղ այդօրինակ մատակարարումները կարող են խախտել ԼՂ-ում առկայ հաւասարակշռութիւնը, ինչպէս նաեւ հետագայում դրանք կարող են օգտագործուել Վրաստանին հարակից ճնշելու համար՝ Ռուսաստանի հետ հակամարտութեան վերսկսման դէպքում», - ասուում է փաստաթղթում:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 1-էն

ճանազրեց ցեղասպանութիւններու կանխարգելման առումով, սակայն ցեղասպանութեան կամ անոր սպառնալիքի կրկնութիւնը «չըջուած չէ մարդկութեան համար»:

«Ցեղասպանութիւնների ժխտումը, անպատժելութիւնը ճանապարհ են հարթում մարդկութեան դէմ նոր յանցագործութիւնների կրկնութեան համար: Անկախ աշխարհաքաղաքական կամ այլ շահերից՝ միջազգային հանրութիւնը պէտք է միասնական լինի ցեղասպանութեան դատապարտման, կանխարգելման գործում: Այս միասնականութեան բացակայութեան հետեւանքով է, որ մարդկութիւնը ակնառու է դառնում ցեղասպանութեան իրականացման նոր փորձերի», - ըսաւ Նալբանդեան:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրուցելով գիտաժողովի մասնակցող Քալիֆորնիոյ Լոս Անճելըսի համալսարանի (UCLA) փրոֆեսոր Ռիչըրտ Յովհաննիսեան կարծիք յայտնած է որ, որ հայթրքական յարաբերութիւններու նորմալացման գործընթացի ձախողումէն յետոյ, պաշտօնական Երեւանը Հայոց ցեղասպանութեան փաստի միջազգային ճանաչման գործին մէջ փոխած է իր մօտեցումը եւ կարծես թէ, աւելի վճռական դարձած է:

Երուսաղէմի մէջ գտնուող Հորքոստի եւ ցեղասպանութեան ինստիտուտի տնօրէն Իսրայէլ Չառնին իր կարգին ըսած է որ, որ

Իսրայէլ չի ճանչնար Հայոց ցեղասպանութիւնը, որովհետեւ «երկրի մէկ մասը շատ բարոյական է, սակայն միւս հատուածը հաշուենկատ է եւ կը ձգտի հասնել իր քաղաքական նպատակներուն»:

«Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը չպէտք է ունենայ որեւէ նախապայման, եւ այս մօտեցմամբ ես առանձին չեմ: Ուրախութեամբ պէտք է ըսեմ, որ Իսրայէլի մէջ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցով մշակութային առումով մենք յաղթած ենք ճակատամարտը: Հայոց ցեղասպանութիւնը ամբողջ խորութեամբ եւ լայնօրէն ճանաչուած է Իսրայէլացիներու կողմէ: Ես չեմ կրնար ըսել, որ Իսրայէլում թերթերու, հանդէսների, ռատիոկայանների, հեռուստաընկերութիւններու եւ ֆիլմերու մէջ առկայ է լուրջ հերքում: Եղած են, իհարկէ, նման դէպքեր, սակայն անոնք շատ հազուադէպ են: Մշակութային առումով մենք յաղթած ենք, սակայն քաղաքական առումով մենք պարտուած ենք», - ըսած է Չառնին:

Յայտնի թուրք պատմաբան Թանէր Աքչամ, որ 1970-ական թուականներէն սկսեալ, քաղաքական պատճառներով հեռացած է Թուրքիայէն եւ ներկայիս կը դասախօսէ Ամերիկայի մէջ, ըսած է որ, Թուրքիա անցում կը կատարէ բռնապետական ռեժիմէն դէպի աւելի բաց՝ դեմոկրատական համակարգ, եւ ինք փոփոխութիւն կ'ակնկալէ նաեւ պատմութիւնը ընդունելու առումով:

կարողանում դուրս գալ շատ տպագիր լրատուամիջոցներ, այսինքն ինքնուրոյն չեն կարողանում իրենց լրատուամիջոցը պահել եւ շատ ժամանակ ապաւինում են տարբեր տեսակի սպոնսորական աջակցութիւններին, դա է լրատուամիջոցների ղեկավարներին դրդել, հիմք է հանդիսացել, որպէսզի նրանք այդպիսի գնահատական տան», - ըսաւ Մելիքեան:

Աշոտ Մելիքեան անդրադարձաւ նաեւ լրատուամիջոցներու աշխատանքի ազատութիւնը սահմանափակող քաղաքական գործօններուն: «Քաղաքական առումով նոյնպէս բաւականին դժգոհութիւններ կան, քանի որ կիսազատ քաղաքական դաշտում աշխատելը բաւականին բարդ է, եւ կիսաազատ քաղաքական դաշտը նշանակում է, որ լրատուամիջոցները իրենց վրայ զգում են քաղաքական ազդեցութիւններ: Շատ ժամանակ

նրանց հրապարակումների բովանդակութիւնը պայմանաւորուած է լինում այս կամ այն քաղաքական ուժի ներազդեցութեամբ», - յայտնեց Մելիքեան աւելցնելով, որ թէեւ գրաքննութիւնը Հայաստանի մէջ պաշտօնապէս արգելուած է, սակայն լրատուամիջոցները կը զգան որ, այդ գրաքննութիւնը կայ:

«Մեր բոլոր նախկին հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ քաղաքական իրավիճակը սրուելիս միշտ սրում է նաեւ իրավիճակը ինֆորմացիոն ոլորտում, եւ լրատուամիջոցների վրայ ճնշումներն են աւելանում: Եթէ հաշուի առնենք, որ միւս տարին նախընտրական տարի է, իսկ 2012-ը՝ ընտրութիւնների տարի, ճնշումները կարող են աւելանալ, եւ դա կարող է արտացոլուել նաեւ միջազգային կազմակերպութիւնների գնահատականներում», - ըսաւ Աշոտ Մելիքեանը:

ԱՆՑՈՒՄ ԱԶԳԱՅԻՆԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՁԵՒԻՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ ԱՂԱՍԻ ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ՀԵՏ

- Ըստ Ձեզ, Հայաստանում ազգային եւ ազատական ուժեր կա՞ն: Ի՞նչ ենք հասկանում ազգային ասելով, ինչպե՞ս է տարբեր խաւերի մօտ այն ընկալում:

- Ազգային բառը Հայաստանում յաճախ կարելի է լսել: Բայց իմաստն ընկալելու համար անհրաժեշտ է նայել դրան այնպէս, ինչպիսին որ այն կայ, եւ փորձել հասկանալ դրա փոխակերպման ընթացքը: Այդ եզրույթի տակ յաճախ նկատի են առնում եւ էթնիկազգայինին, եւ ազգ-պետութեանը բնորոշ էլեմենտներ: Եւ դա պատահական չէ, քանի որ մեր ամենօրեայ կեանքում էլ ազգայինը հանդիպում է շատ բազմազան ու նոյնիսկ բազմազան դրսեւորումներով:

Այսօր տարբեր տեսակի քաղաքացիական ակցիաները՝ սկսած բնապահպանականից, վերջացրած քաղաքաշինականով, պատանակման արժէհամակարգերին բնորոշ երեւոյթներ են եւ մասնակցային ժողովրդավարութեան դրսեւորումներ են: Եւ դա մեր ազգայինի մի մասն է: Բայց դրան զուգահեռ կան նաեւ մարդիկ, ովքեր ազգայինը կապում են բացառապէս ծագմանը, արիւնակցութեանը, կրօնին: Այսինքն՝ ասել, որ մեզանում ազատականն ու ազգայինը հակասում են իրար, սխալ կը լինի: Կարծում եմ՝ Հայաստանում այսօր տեղի է ունենում խորհրդահայ ազգայինից եւ ազգարիւնակցական ազգայինից, որոնք երկուսն էլ փակ խմբակային բնույթի են, անցում ազգայինի արդիական ձեւին, որն արդէն կառուցում է քաղաքացիութեան սկզբունքի վրայ: Այս պատճառով էլ կարծում եմ՝ աւելի տեղին կը լինի խօսել ազգայինի աւելի պարզ ձեւերից աւելի զարգացածին փոխակերպուելու մասին:

- Մենք սակայն ազգայինի մասին շատ ենք լսում հենց իշխանութիւններից՝ ազգային միասնութեան, ազգային աւանդոյթների ու արժէքների կարեւորութեան մասին ճառեր: Արդօք՝ չենք չարաշահում ազգայինը:

- Ազգայինը ոչ ոք չի չարաշահում: Այն պարզապէս ինտերպրետացում է տարբեր հարթութիւններում ու ծառայեցում տարբեր նպատակների: Եթէ դա անում է այսօրուայ օլիգոպոլիական իշխանութիւնը, ապա բարեւում ենք օլիգարխիկ նացիոնալիզմի մերօրեայ դրսեւորումներին, ինչը օլիգարխիայի համար ծառայում է որպէս լեգիտիմութեան նոր, ուժայինից ու ֆինանսականից տարբեր ու լրացուցիչ աղբիւր: Բոլոր աւտորիտար իշխանութիւնները վաղ թէ ուշ փորձում են խմբիշխանական նացիոնալիզմի այս կամ այն ձեւը ծառայեցնել իրենց դիրքերի ամրապնդմանը: Սա այն նացիոնալիզմը չէ, որը կարող է ազգ-պետութեանը բնորոշ ֆորմաներ ծնել: Դրա կողմից ձեւաւորուող ֆորմաները, որոնք կարող էք տեսնել Երեւան քաղաքի համարեա բոլոր փողոցային սիւներին, ազգ-արիւնակցական ու խմբիշխանական հարթութիւնում են:

Աւելի հազուադէպ եմ հանդիպում ազգայինի քաղաքացիական բնույթի ինտերպրետացիաներ: Բայց հանդիպում եմ: Ինչը նշանակում է, որ դրական գործընթացներ առայժմ դանդաղ, բայց կան: Ու ենթադրում եմ, որ այդ գործըն-

թացներն արդէն անդառնալիութեան փուլում են:

Այսինքն՝ զգացմունքների վրայ կառուցուող, պլակատային օլիգարխիկ նացիոնալիզմը շատ արագ կարող է փլուզուել, եթէ որպէս հակակշիռներ ձեւաւորուեն մարդու զարգացմանը, բարեկեցութեանն ու անվտանգութեանը վերաբերող եւ համազգային ու համապետական շահեր ներկայացնող գաղափարներ:

- Ինչո՞ւ, օրինակ, քաղաքացիական ազգայինը չի ձեւաւորուել մեզանում, գուցէ քրեաօլիգարխիկ համակարգին ձեռք չի տալիս:

- Իրենց իհարկէ ձեռք չի տալիս: Բայց հարցը միայն քրէաօլիգարխիկ համակարգը չէ: Մեր կողմից այդքան փնտլած օլիգարխիկ համակարգը առկայ է մեր արժէհամակարգում եւ մեծ տեղ է գրաւում մեր ամենօրեայ կեանքում, բազմային ու թաղային կենցաղում: Այդ քրէաօլիգարխիկ համակարգի յատկանիշները ես ամէն օր տեսնում եմ մեր թաղամասի նոյնիսկ մանկահասակ երեխաների մօտ, ովքեր ճնշում կամ ծեծի են ենթարկում իրենցից տարբեր, մի քիչ այլ ոճի, աւելի բարեկիրթ ու զարգացած երեխային, մէկը միւսի հետ գողական ձեւով «ուզգրիտներ» են անում, մատն օղում անկած մէկը միւսին հարցնում՝ ապէ, բա դու քո արածի համար կարա՞ս «ատչոտ» տաս:

Մինչեւ օրս էլ գործող մեր խորհրդահայ մտաւորականութիւնը ձեւաւորուել էր այսարակութեան մէջ տեսանկիւն ունենալու բազմաթիւ տեսակի համար: Ահա թէ ինչու մեր շատ ինտելեկտուալներ չունեն յատակ քաղաքակրթական կողմնորոշում ու արժէհամակարգ: Լինել ազգային, շատ դէպքերում նշանակում է լինել հակաարեւմտական: Յաւուր, Հայաստանում մարդկանցից շատերը դեռեւս հակաարեւմտականներ են: Սովետի շրջանում ձեւաւորուեցին Արեւմուտքն ատող, արեւմտեան մշակոյթին ամենակոպիտ ձեւերով հակադրուող ենթամշակոյթներ, որոնք այսօր էլ շարունակում են դեր խաղալ (ինչպէս ասենք ռաբբի): Դրանցից որոշները փոխակերպուել են, ստեղծել ազգայինի յետխորհրդային ֆորմաներ, որոնք շարունակում են ընդդիմանալ արեւմտեան քաղաքակրթական արժէհամակարգին՝ որակելով այն որպէս ազգայինը իրախաբող ու վտանգող: Իսկ նրանք էլ, ովքեր հակուած են արեւմտեան քաղաքակրթական արժէքների ինտեգրմանն ու Հայաստանում դրանց ադապտացմանը, յաճախ իրենց դուրս են դնում ազգայինի շրջագծից, քանի որ դա ընկալում են որպէս փակ ու ռեակցիոն երեւոյթ: Սակայն խնդիրն այն է, որ այդ նոր որակի արժէհամակարգը կրողներն իրենք իրենց տեսնեն ազգայինի ներսում ու փորձեն խախտել ազգայինի միազափութիւնն ու նպաստել բազմազափութեան ձեւաւորմանը:

Կարծում եմ, որ պէտք է փոխել ազգայինի ինտերպրետացիան: Ազգայինը բազմազան է եւ ինչպէս շատ գաղափարներ, ազատականութիւնը նոյնպէս ներառում է իր մէջ: Բայց, իմ կարծիքով, ոչ այնքան կարեւոր է ազատականութիւնը, որքան՝ արեւմտականու-



թիւնը: Մենք, որպէս ազգ, պարտաւոր ենք քաղաքակրթական կողմնորոշում ունենալ: Արեւմտեան արժէհամակարգը յենուած է մարդու վրայ: Սա նշանակում է, որ բոլոր հասարակական ինստիտուտները պէտք է ծառայեն մարդուն: Իսկ մեզանում հակառակն է: Մարդն է ծառայում թաղին, օլիգարխին, ով իրեն նոյնացնում է ազգի ու պետութեան հետ: Լաւ է, որ Հայաստանում էլ կան մարդասիրական արժէհամակարգ ունեցողները: Նրանք յաճախ նաեւ հեռանում են մեր երկրից, ինչի մէջ ես բացասականին զուգահեռ նաեւ դրական բան եմ տեսնում:

- Այսինքն՝ նրանց արտագաղթի դիմելու մէջ վատ բան չէ՞ք տեսնում, արդեօք ազատականացալու հնարաւորութիւնները դրանից չեն քշանում, երկրի մտաւոր պոտենցիալը չի թուլանում:

- Հայաստանն այսօր սահմանափակում է զարգացած մարդկանց հետագայ զարգացումը: Եթէ այդ մարդիկ մնան Հայաստանում, իրենց մարդկային ունակութիւնների որակն աստիճանաբար ընկնելու է: Ո՞րն է աւելի լաւ, մարդը մնայ Հայաստանում եւ աստիճանաբար հետընթաց ապրի, թէ՞ հեռանալով կարողանայ աճել, իրացուել ու երջանիկ զգալ իրեն: Ես երկրորդի կողմնակիցն եմ, որովհետեւ վերջին հաշուով, շատ շատերը որակական աճ ապրելով, յետագարձօրէն ազդում են Հայաստանի վրայ եւ դառնալով իւրատեսակ քաղաքակրթական ազենտներ՝ նպաստում Հայաստանում տեսանկիւնների բազմազափութեան ձեւաւորմանը:

Որպէսզի մարդիկ երկրից չհեռանան, պէտք է փոխել երկրի զարգացման ուղին: Ասենք օրինակ պէտք է պետական մակարդակով եւրամիութեան անդամ դառնալու խնդիր դնել, ինչպէս ասենք դա անում է մեր հարեւան վրաստանը: Իսկ եթէ նման խնդիր դնող իշխանութիւն չունենք, ապա պէտք է ձգտել ձեւաւորել նման խնդիր իր առջեւ դնող նոր քաղաքական ուժեր, որոնք կը կարողանան այլընտրանքային առաջարկներ ներկայացնել՝ ի տարբերութիւն այսօրուայ Հայաստանի իշխանութիւնների ու յետխորհրդային ընդդիմութեան: Հայաստանը կարիք ունի ազատագրուել յետխորհրդային երեւոյթներից:

- Ասում ենք պետք է ինտեգր-

ուենք, զարգանանք, իսկ ինչո՞ւ սայլը տեղից չի շարժում:

- Կարծում եմ՝ մեզանում դեռ շատ չեն մարդասիրական արժէհամակարգով բնութագրուողները: Այդպիսիները նոր են միայն փորձում դուրս գալ լուսանցքից ու մասնակցել ազգային տարածութեան ձեւաւորմանը: Տեսէք, օրինակ, աղջիկների մի զգալի մասի մէջ ընդունուած է իրենց պոտենցիալ «առնողների» ուշադրութիւնը գրաւելու համար հագնուել սեքսուալ, բայց վարել պահպանողական սեռական կեանք: Դրանով իսկ նրանք իրենց ապագայ ամուսնուն, այսինքն՝ պոտենցիալ գնորդին, իցոյց են դնում իրենց սեքսուալութիւնը՝ միաժամանակ պահպանելով իրենց կուսութիւնը, որպէսզի գնորդը գոհ լինի իր ապրանքի որակի ամբողջականութիւնից, քանի որ այսօր Հայաստանում որակեալ ապրանք ասելով հասկանում են գեղեցիկ, սեքսուալ, բայց կոչս աղջիկ: Եւ ինչպէս կ'ասէր Հրաչ Գալստեանը, յաճախ նոր ստեղծուող տեքստերը դատարկ են լինում: Փոփոխութիւնները ժամանակ են պահանջում:

Անգամ շատ ազատական մարդիկ նոյն կարմիր խնձորին մեծ, շատ մեծ տեղ են շարունակում տալ:

Այն ազատականները, որոնք այս հարցին մեծ կարեւորութիւն են տալիս, նրանք միայն ազատ առեւտրի, բայց ոչ մի դէպքում անհատի ազատութեան կողմնակիցներ չեն: Ազատութիւնը բնորոշ է այն մարդկանց, ովքեր աշխատում են իրենք իրենց զարգացման վրայ, ամէն օր են աշխատում: Ազատութիւնը մարդու ինքնագարգացման ու որակական աճի արդիւնքում է ձեւաւորում:

- Իսկ գուցէ մեր մէջ մտած աւանդոյթներն են խանգարում ազատականացմանը:

- Բոլոր տեղերում կան աւանդոյթներ, բոլոր տեղերում էլ դրանք խանգարել են՝ թէ Եւրոպայում, թէ Հիւսիսային Ամերիկայում, բայց դրանք յաղթահարել են մարդիկ, եւ այդ գործընթացը սկսուել է մարդկանց լեզափոխական քայլերի միջոցով՝ սկսած հագուկապի փոփոխութիւնից, վերջացրած աւանդական նորմերից, կարծրատիպերից հրաժարուելուց:

Խնդիրն ինքնանպատակ չէ, մարդիկ հրաժարուում են այն աւանդոյթներից, որոնք խանգարում են մարդուն որպէս անհատ իրացուելուն: Հայաստանում շատ կարեւոր է անգամ հագնուելու ոճի մէջ միազափութիւնը չաղթահարելը: Միազափութեան չաղթահարումով հնարաւոր կը լինի զարգացումը: Իսկ ազատական, թէ այլ ուղիով, դա արդէն գաղափարական հարթութիւնում քննարկումների, պայքարի ու համագործակցութեան խնդիր է: Միանշանակ ազատականացմանը սուրբ տալը դա նոյնպէս ինչ-որ տեղ միազափութիւն է: Իսկ միազափութիւնը լուրջ թերութիւն է:

ԶՐՈՒՅՅՑ
ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆԸ



ԱՐԵՒՍՏԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ (16-18ՐԴ ԴԴ.)

ՓՐՈՖ. Ա.Ի.ՆՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ

Ստորեւ բերուած մեր այս յօդուածը առաջին անգամ լոյս է տեսել 1988 թ. ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդէսում» (տե՛ս թիւ 2 (121), էջ 124-136): Ներկայումս այն վերահրատարակուած ենք հայ-թրքական յարաբերութիւններում վերջերս տեղի ունեցած մի շարք վիճելի հարցերի շարժառիթով: Բնականաբար կատարել ենք որոշ խմբագրական աշխատանք, աւելացնելով Հայոց ցեղասպանութեան վերաբերող հատուածը, ինչպէս նաեւ տերմինաբանական բառարանը:

Վիճելի հարցեր ասելով մենք յատկապէս նկատի ենք ունեցած հետեւեալ եղելութիւնները:

1. 2010 թ. Սեպտեմբերի 19ին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում տեղի ունենալիք պատարագի նախորդին խաչը չդրուեց զմբէթին:

2. Հոկտեմբերի 1ին, Թուրքիայի Ազգայնական շարժում կուսակցութեան ղեկավար Տելեթ Պահչէլի եւ այլ ղեկավարներ Անիի Մայր տաճարում Ուրբաթ օրեայ նամագի աղօթք կատարեցին:

3. Օգոստոսի վերջերին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի այցելած հայ պատանիներին, Թուրք ոստիկանները թոյլ չեն տուել աղօթել եւ մոմ վառել եկեղեցում:

4. Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար Ահմէթ Դալութողլուն Ելոյթ ունենալով ամբիկեան Հարվըրտ համալսարանում, հայ-թրքական յարաբերութիւնների մասին խօսելիս նշել է, «Այս երկու ազգերը սկսած են գոյակցել 4րդ դարէն ի վեր: Այս երկու ազգերու միջեւ ցեղային խտրականութիւն չէ կրնար տեսնել»: (Տե՛ս, «Մասիս» շաբաթաթերթ, Հոկտեմբեր 2, 2010, էջ 1):

Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող ոչ մահմետական ժողովուրդներն աշխարհիկ եւ հոգեւոր «արտօնութիւններ» ստացան սուլթան Մեհմեդ Բ-ի (1451-1481) գահակալութեան շրջանում: Այլադաւան հպատակներին աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւն տալով սուլթան Մեհմեդ Բ-ը եւ նրա յաջորդները ջանում էին համայնքների համակարգը ծառայեցնել իրենց նպատակներին: Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակութիւնը հպատակներին հլու հնազանդ եւ օտար պետութիւնների ազդեցութիւնից հեռու պահելու

համար: Հարսանիքը, ապահարզանը, գոլքային եւ կենցաղային վիճերը լուծուած էին տուեալ համայնքի կրօնական օրէնքներով: Նրանց միջոցով զանազան էին տարբեր տեսակի հարկեր թէ պետութեան օգտին եւ թէ տուեալ պատրիարքութեան համար:

Սուլթան Մեհմեդ Բ-ի եւ նրա անմիջական յաջորդների ֆերմանները (հրովարտակները) որոնք վերաբերում էին յոյն եւ հայ պատրիարքների «առանձնաշնորհումներին», չեն պահպանուել: Այդ ֆերմանները չեն յայտնաբերուել ոչ յոյն, ոչ հայ պատրիարքարաններում եւ ոչ էլ Օսմանեան կայսրութեան արխիւներում: Շատ հաւանական է, որ դրանք ոչնչացել են Կ' Պոլսում բռնկուած հրդեհներից: Միայն յետագայ պատմագիրներ են արձանագրում այն փաստը, որ Մեհմեդ Բ-ը Կ. Պոլիսը գրաւելուց յետոյ յոյն եւ հայ համայնքների համար յատուկ ֆերմանով հաստատել է պատրիարքարաններ:

Հայ համայնքի (ermen i millet) պատրիարքութիւնը յատուկ հրովարտակով հաստատուել է 1461 թ., այն ժամանակ, երբ Մեհմեդ Բ-ը, Պուրապի Յովակիմ եպիսկոպոսին տեղափոխելով Կ. Պոլիս, նշանակեց պատրիարք: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Յովակիմ եպիսկոպոսով չէ, որ սկսուած է հայոց պատրիարքութեան գոյութիւնը Կ. Պոլսում: Փաստերը վիճարկում են, որ Կ. Պոլսում հայկական հոգեւոր առաջնորդութիւն է եղել դեռեւս բիզանդական կայսրութեան օրօք: 1360 թ. Կ. Պոլսում հայերն ունէին Ս. Սարգիս եկեղեցին եւ նրա շուրջը համախմբուած հայկական համայնք:

Մեզ հասած ամենահին սուլթանական հրովարտակը, որ հաստատում է հայոց պատրիարքութեան իրաւունքներն ու պարտականութիւնները Օսմանեան կայսրութեան սահմաններում, 1746 թ. Յունիսի Յին Գրիգոր Պատմաճեանին (1746-1773 թթ.) շնորհուած բերաթն է, որն առաջին անգամ հայատառ թրքերէնով հրատարակել է Ա. Պէրպէրեանը: 1774 թ. Յունուարի 22ին Սուլթան Աբտիւլ Համիդ Ա-ը (1774-1789) համանման բերաթ է շնորհել նաեւ Զաքարիա պատրիարքին (1773-1781), որի հայերէն թարգմանութիւնը «Ազգիս Հայոց պատրիարք Զաքարիա աստուածաբան վարդապետի պատրիարքութեան խատտի շերիֆի հայկական թարգմանեալ օրի-

նակն է» վերնագրով հրատարակուած է «Դիւան Հայոց Պատմութեան» մէջ:

Թուրք պատմաբան Եաւուզ էրջանը իր պատմագիտական յօդուածներէից մէկում մատնանշում է, որ Կ' Պոլսում գտնուող «Քիամիլ Քեփեջիի անձնական հաւաքածուում» 2539 համարի տակ ամփոփուած ամենահնագոյն դափթարում ընդգրկուած է 1517 թ. Եաւուզ Սուլթան Սելիմի (1512-1520) կողմից Երուսաղէմի հայ պատրիարք Սարգիս Գ-ին տրուած հրովարտակը (տես Belleten 1984, no 188 S. 1120):

Ընդհանրապէս, համայնքների կողմից ընտրուած կրօնական առաջնորդը հաստատուած էր կայսերական յատուկ բերաթով, ուր սովորաբար կրկնուած էին նախորդ սուլթանների կողմից տրուած հրամանները: Այս մասին սուլթան Ապտիւլ Համիտ Ա-ի ֆէրմանը եւ հրամանագիրը առ նախնեօք մեծագոր արքայից, կրկին եւ վերստին նորոգիցի եւ հաստատիցի ընդ որս եւ հրամայեցաւ ի տէրութենէ նորոգիլ եւ ֆէրմանք մեծի Պօլսոյս: Այնուհետեւ բերաթում նշուած էին համայնքի կրօնական առաջնորդի վարչական իրաւունքները իր հոտի նկատմամբ, ինչպէս նաեւ կրօնական ծիսակատարութիւնները, որոնք իւրաքանչիւր էին տուեալ համայնքին: Այդ բոլորը, ինչպէս նշուած էր հրամանագրերում, չպէտք է հակասէին շարիաթի դրոյթներին: Այդ բարձր բերաթները շարիաթում էին լինում կեղծ խօսքերով եւ փրուն խտատմաներով, որոնց մեծ մասը, բնականաբար, չէր գործադրուած կեանքում:

Հայոց պատրիարքութեանը շնորհուած բերաթների բովանդակութիւնը ցոյց է տալիս, որ հայ համայնքի կողմից առաջադրուած իւրաքանչիւր նոր պատրիարք պարտաւոր էր 100 հազար ակչէ միանուազ նուիրել սուլթանական գանձարանին, որպէսզի ձեռք բերէր իր պաշտօնին նշանակուելու բերաթը: Այնուհետեւ պատրիարքը պարտաւոր էր հայ համայնքից հաւաքել «Միրի մուկաթա» հարկը (100-1400 հազար ակչէ) եւ յանձնել կառավարութեանը: Այս հանգամանքը խիստ շահագրգռում էր սուլթաններին յաճախակի փոփոխելու պատրիարքներին, որպէսզի ամէն մի նորընտրի պատրիարքից կորզէր 100 հազար ակչէ: Յովակիմից սկսած մինչեւ Յակոբ Եպս. Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին հերթականօրէն բազմել են մօտ 82 անձնաւորութիւններ: Վերջին հարիւրամեակում դրամի աւելի շատ կարիք զգացող սուլթանները առանց պատ-

ճառով փոխել են սրանց, երբեմն նոյն մարդիկ երկու անգամ նշանակելու արտօնութիւն տուել եւ ամէն անգամ էլ ստացել սահմանուած հարկագումար: Փաստերը ցոյց են տալիս, որ սուլթանները ժամանակի ընթացքում բարձրացրել են պատրիարքութեան գինը: 1657 թ. Թովմաս Բերիացին մեծ վեցիր Քիոքրուլու Մեհմեդ փաշայից պատրիարքութեան հրովարտակ է ձեռք բերել վճարելով 400,000 ակչէ: Պատրիարքները միաժամանակ պարտաւոր էին նոր վեցիրին տալ 500 դուրուշ, վեցիր-փոխանորդին 250 դուրուշ, չաւուշ բաշուն 200 դուրուշ: Մի խօսքով, հայ հոգեւորականութիւնը օսմանեան կեղրոնական կառավարութեան համար եկամտի կորուստ աղբիւր էր:

Կ. Պոլսոյ հայ համայնքին եւ ոչ մահմետական այլ հպատակներին վերաբերող թրքական պաշտօնական ֆերմանները հիմնականում ամփոփուած են Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի (Ստամպուլի Ժ.Չ. դարի կեանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածուում: Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վաւերագրերը վերցուած են Ստամպուլի պետական արխիւից: Իւրաքանչիւրին՝ ըստ բովանդակութեան տրուած է համապատասխան վերնագիր: Իսկ ֆերմանների վերջում նշուած տարեթուերը ցոյց են տալիս, որ դրանք հրատարակուել են սուլթան Սուլէյման Ա-ի (1520-1566), սուլթան Սելիմ Բ-ի (1566-1574) եւ սուլթան Մուրատ Գ-ի (1574-1595) ժամանակաշրջանում: Սուլթանական այս հրովարտակները բովանդակում են եկեղեցիների եւ այլ բարեպաշտական շինութիւնների քանդման, դաւանափոխութեան, կրօնական ծիսակատարութիւնների եւ քրիստոնեայ բնակչութեան ազգային տարագի հարցում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերեալ եւ այլ բնոյթի նիւթեր:

Սուլթանական այս հրովարտակներից իմանում ենք, որ սուլթան Սելիմ Ա-ի ժամանակ Կ. Պոլսի եկեղեցիներից շատերը քանդուել են: Իսկ Սուլթան Սուլէյմանի գահակալութեան շրջանում, Կ' Պոլսի կադիին ուղղուած յատուկ ֆերմանով քանդուել է Սուլու-մանաստրի (Ս. Գէորդ) հայկական եկեղեցուն կից կառուցուած շինութիւնն ու սահմանափակումներ են դրուել կրօնական ծիսակատարութիւնների վրայ. «Իմ բարձր հրամանագիրը առնելուդ պէս քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինութիւնը: Միեւնոյն ժամանակ թոյլ

Շարք էջ 18



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐՐԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





A.B.A. INSURANCE SERVICES

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՍ ՀՈՒՆԿՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Առաջադրանքի ժամը 6-ն է: Երկու ժամ է ոտքի վրայ եմ: Փորձում եմ կրկին անկողին մտնել՝ լրացնելու համար պարտադիր քնի այն վեց ժամը, որ բժիշկը մշտապես չի շեղում է:

- Քուն եւ քայլել, - սա է այսօր քո առողջութեան բանալին, - ասում է նա, - իսկ առողջ քուն բերողը քայլելն է: Այս առողջ UCLA հիւանդանոցի իմ փրոֆեսոր Դիւրազոն է, որ մշտապես իր հսկողութեան տակ է պահում իմ առողջական վիճակը:

- Դէ լաւ Հենրիկ, - ասում եմ ինքս ինձ, - շարժուիր, գնա՛, քայլի՛ր, միեւնոյնն է՝ քունդ չի տանում: Լոյսը դեռ չի բացուել: Այսօր արեւ չի լինելու, - ասել են լուրերում:

Լուսաբացն արդէն իր թեւերն է փռում հորիզոնի վրայ: Երկինքն ամպոտ է, թոււմ է թէ, ուր որ է երկինքը կը պատուռի ու անձրեւ կը տեղայ: Իսկապէս, պէտք է հետեւել բժշկի խորհրդին՝ քայլել, քայլել գոնէ օրը կէս ժամ: Մեր տնից մինչեւ Ուեստըրն-Սանտա Մոնիքայի անկիւնը ոտքով քայլելու պարագային, կարելի է տաս րոպէսում հասնել: Սանտա Մոնիքա չհասած, մի Մակդոնալդ կայ: Հեռուից նկատում եմ երկու կանանց, - հա՛յ են, - մտածում եմ ես, - եւ որքան մօտենում են նրանց՝ այնքան հաստատուն է դառնում կարծիքս:

- Ի՞նչ են անում նրանք այս ժամին մայթին կանգնած:

Ինձ տեսնելիս փոքր ինչ շփոթում են ու փորձում են շրջել հայեացքները, որպէսզի չճանաչեմ իրենց: Նկատելով նրանց շփոթ վիճակը, կախում եմ գլուխս ու լուրջաբան անցնում իրենց կողքով: Հետաքրքրութիւնից դրդուած, Սանտա Մոնիքայի անկիւնից հետեւում եմ այդ կանանց հետագայ քայլերին: Նրանք դեռ կանգնած են: Փողոցում գրեթէ մարդ չկայ, երկու մարդ հանրակառքի կանգառում են: Համատարած լուրթիւն՝ այն էլ մեր շրջանի ամէնաբանուկ խաչմերուկում: Մեքենաներն էլ՝ հատուկէնտ: Ուզում եմ շարունակել քայլքս, բայց ինչ որ մի անբացատրելի ուժ ինձ ասում է, կանգնի՛ր Հենրիկ, հետաքրքրի չէ՞ թէ ովքեր են այդ հայ կանայք, ի՞նչ են անում միայնակ այս ժամին, երբ գրեթէ մարդ չկայ փողոցում: Քիչ անց կոսմիկական արագութեամբ փողոցն ի վար սուրում է մի կոտրած-թափած մեքենայ ու կանգնում մեր հայ կանանց կողքին: Զգացում է, որ երկխօսութիւն է տեղի ունենում

նրանց եւ վարորդի միջեւ: Մի քանի րոպէ յետոյ մեքենան հեռանում է: Ո՞վ գիտէ, թէ ում տեղն էր դրել վարորդը մեր հայ կանանց: Ինչպէս երեւաց, երկխօսութիւնը արդիւնքի չլանգեց...:

- Աստուած իրենց հետ, միայն թէ գարմանալ կարելի էր, որ կանանց ձեռքներին ոչինչ չկար՝ ոչ ձեռքի պայուսակ, ոչ էլ որեւէ իր: Արդէն Սանտա Մոնիքա պողոտայի վրայ եմ: Մօտենում եմ, ականջը խօսի, վաղամեռիկ Յարութիւն Երէցեանի նախկին Ապրիլ գրատանը, որն այժմ վարսալարդարի սրահ է: Միտքս թռչում է յետ, աւելի քան քսանհինգ տարի, երբ այս գրատուն-տպարանում էր շարունակ հայրիկիս՝ Յակոբ Անասեանի ստուարածաւալ, հաստափոր «Մանր Երկեր»՝ գիտական նիւթերի 1200 էջանոց գիրքը:

- Հենրիկ ջան, մատարօ, հաճի՛ս ըսէ հայրիկիդ, որ քիչ մը արագացնէ սրբագրութիւնները, ծօ, քանի՞ անգամ սրբագրել կ'ըլլայ: Աս չորրորդ սրբագրութիւնն է, որ հայրիկդ կ'ընէ, - նեղսրտած ասում էր Յարութիւնը:

- Ճիշդ կ'ըսէ կոր Հենրիկ, մեր գործերը կը կազան հօրդ գիրքին պատճառաւ, - աւելացնում էր իր կեանքի վերջալոյսին սպասող Յարութիւնին եղբայրը՝ Նուպարը:

Այս ամէնը լսելուց յետոյ արդէն ես էի վրայ տալիս.

- Տղա՛ք, ըսէ՛ք նայի՛մ, գիտե՛մ, հայրս քանի մը անգամ կը սրբագրէ իր գրածները, բայց բառ կամ նախադասութիւն մը փոխէ՞...:

- Ոչ, - միաբերան ասում էին եղբայրները:

- Է՛հ, ուրեմն սառախախներն է, որ կ'ուղղէ հայրիկս, իսկ այդ սխալներն ալ ձեր մեղքն է, աւելի ճիշդ նիւթը շարողինը:

Մինչեւ վերջերս Ապրիլ գրատան հարեւանութեամբ մի փոքր թատրոն կար: Հիմա շարժում չկայ այդ մայթին, բայց..., բայց այս ի՞նչ է, երեք գրեթէ ամբողջովին մերկ ջահել աղջիկներ ինձ նշան են անում, որ իրենց մօտենամ: Ուղղութիւնս փոխելն ու գրեթէ վազելս մէկ եղաւ: Ի՞նչ իմանաս, այդ ամայի փողոցում ինչեր չեն կարող լինել, դէ, ես էլ, նման իրավիճակներում..., պարզապէս վախկոտ եմ, երեք աղջիկ, պատկերացնում էք...:

Ես երկար տարիներ է, որ ապրում եմ Հոլիվուտում, բայց նման տեսարանի չէի հանդիպել: Ինչեւէ, շարունակում եմ քայլել Սանտա Մոնիքա պողոտայով դէպի Արեւելք: Այս շրջանը, աւելի ճիշդ՝ Ուիլթոնից սկսեալ դէպի Արեւելք,



Հոլիվուտի երկրորդ կարգի թաղամասն է, ուր հիմնականում ապրում են հայերն ու մեքսիքացիները (առաւել՝ Հարաւային Ամերիկայի երկրներում ծնուածներ): Վերջին տարիներս մեր կողմերում են հաստատուել դեղին ցեղի ներկայացուցիչները, որոնք Լոս Անճելոս Հարաւից սկսեալ, «գրաւելով» ամէն ինչ (չէնքեր, բիզնէսներ, խանութներ, եւ այլն) արդէն հասել են Սանտա Մոնիքա պողոտայ:

Ինձ համար չափազանց հետաքրքիր էր դիտել թէ առաջադրանքի վաղ ժամին ովքեր են քայլում մայթերով, ո՞վ ուր է շտապում: Ահա հասել եմ Նորմանդի փողոցի անկիւնը: Հանրակառքի (բաս) կանգառն է: Սպասողներն անխտիր սպանախօս ազգերից են: Բոլորն էլ հանդարտ խաղաղ: Ճարպիկ մի կին, մարքէտի սայլակը վեր է ածել շարժական սրճարանի եւ այդ ցուրտ եղանակին տաք սուրճ եւ խմորեղէն է վաճառում: Եւ, որովհետեւ այդ ժամին փողոցի վրայ եղող սրճարաններն ու խանութները փակ են, շարժուն «սրճարանի» առեւտուրը ետում է: Նոյնիսկ հանրակառքի սեւամորթ վարորդն է պահանջուած վայրկեաններից աւելի երկար սպասում կանգառում, որպէսզի մարդիկ կարողանան սուրճ գնել ու բարձրանալ հանրակառք, թէեւ ինչպէս բոլորը, այնպէս էլ ինքը գիտի, որ սուրճ եւ ուտելիք չի կարելի վայելել հանրակառքի մէջ: Երկար եմ կանգնած մնում կանգառում, ապշում ու զարմանում, թէ որքան բարեացակամ են այստեղ մարդիկ, մէկը միւսին յարգող, մէկը միւսին գիշող, հաւանաբար իւրաքանչիւր օր նոյն պատկերն է այս կանգառում: Եւ, ինչպէս երեւում էր, ամէն ոք ծանօթ էր մէկը միւսին:

Քիչ անց հանրակառքի ետին է կանգնում ոստիկանի մեքենան: Թոււմ է, թէ ահա ուր որ է

ոստիկանը կը գաջ ու կարգելի «սրճարանի» տիրուհուն առեւտուր անել մայթին: Բայց ոչ, ոստիկանը դուրս էլ չի գալիս մեքենայից, ու մի քանի րոպէ սպասելուց յետոյ, տեսնելով որ ամէն ինչ խաղաղ է՝ արագօրէն հեռանում: Յատակ է, օրէնքի պահպանը շրջանցեց օրէնքը: Մարդկային է, ոչինչ չես ասի: Նա էլ մարդ է, եւ հասկանում է հասարակ մարդկանց վիճակը, մարդիկ, որոնք հանապազօրեայ հաց հայթայթելու համար պարտաւորուած են այդքան կանուխ մեկնել իրենց գործատեղիները: Երբ օրը ամբողջովին կը բացուի, սրճատէրն իր սայլակն ու փասա-փուսէն հաւաքած կը հեռանայ՝ յաջորդ օրը դարձեալ նոյն տեղում սպասարկելու համար հանրակառքի սպասող ուղեւորներին: Շարունակում եմ քայլել: Անցել եմ արդէն մի քանի հայկական խանութների կողքով: Բնականաբար բոլորն էլ փակ են, միայն French bakery-ն է բաց, որ վերջերս է բացուել: Անունն է Ֆրանսական, բայց ոչ մի Ֆրանսական խմորեղէն չկայ, բազմոն էլ (Ֆրանսական հաց) Աստուած բազէտ համարի: Նոյն մայթի վրայ է՛մնոնթ չհասած մի կաթողիկէ եկեղեցի կայ:

- Հենրիկ, - ասում եմ ինքս ինձ, - մտիք եկեղեցի, եթէ այն բաց է, աղօթքդ արա, առողջութիւն մաղթիր ինքդ քեզ, Աստուած քո ձայնը կը լսի, մի մոմ էլ վառիր Հայաստանի բարօրութեան ու անվտանգութեան սիրոյն, եկեղեցին եկեղեցի է, բաւ է, որ քրիստոնէական լինի:

Ժամը եօթն է, գրեթէ մէկ ժամ է անցել տնից դուրս գալուց յետոյ: Մտնում եմ եկեղեցի, խաչակնքում ու միանում այդ ժամին այնտեղ գտնուող 40-50 հաւատացեալներին: Սկսում է առաւօտեան աղօթքն ու ժամերգութիւնը: Շուրջիններս նայելով ես էլ եմ մի քանի անգամ

Շարք էջ 17

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ՄԹՆՈԼՈՐՏԸ ՃՈՒՍԱՑՈՒՑԷՔ ԶԵՐ ՏԱՆ ՄԷՋ...

VREJ PASTRY

ՎՐԷՅԻ ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐՈՎ ԵՒ ՓԱՌԱԽՈՐ ԽՄՈՐԵՂԷՆՆԵՐՈՎ

*** ՏՕՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ԱՆՊԱՅՄԱՆ *
ՎՐԷՅԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

PASADENA 626-797-2331 **GRANADA HILLS 818-366-2526** **GLEN DORA 626-914-1940** **VREJ PASTRY FOR ALL YOUR OCCASIONS!**

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 115-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԵՒ ՇՆՈՐՀԱՅԱՆԴԷՍ «ՅՈՒՇԱՐՁԱՆ ՈՒՄՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ» ԳԻՐՔԻՆ

Անուն մը Բենիամին ժամկոչեան, որուն կենսագրութիւնը որպէս մանկավարժ դաստիարակ եւ բազմավաստակ տնօրէն Սահակեանի առնչուած է լիբանանահայ դպրոցի պատմութեան եւ սերունդներու հայեցի դաստիարակութեան:

Իր արդիւնաշատ վաստակը Խ. Հայաստանի կառավարութեան կողմէ «Մերոպ Մաշտոցի» անուան շքանշանի արժանանալէ ետք, անկախ Հայաստանի մէջ իր չիշատակը յաւերժացնող արժանի ձեռնարկ էր 1993-ին Երեւանի «Թիւ 119 միջնակարգ դպրոցին» «Բենամին ժամկոչեանի անուան թիւ 119 միջնակարգ դպրոց» անուանակոչումը:

Արժանավայել շուքով Հոկտեմբեր 10-ին մեծ դաստիարակին անունը կրող դպրոցին մէջ ծննդեան 115-ամեակը եւ «Յուշարձան ուսուցչապետ Բենիամին ժամկոչեանի» գիրքին շնորհահանդէսը տեղի ունենալէ ետք, 4 Դեկտեմբեր, շաբաթ օր ժամը 6:00-ին Հայկազեան Համալսարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ յարգանքի ձեռնարկը ի ներկայութեան Համալսարանի նախագահ վեր. Փօլ Հայտոսթեանի, նախկին սաներու, կրթական մշակներու եւ մտաւորականներու:


Ձեռնարկին բացումը կատարեց Հայկազեան Համալսարանի գրադարանապետուհի օրդ. Սոնիա Սիսլեան, որ անդրադարձ կատարելէ ետք Բենիամին ժամկոչեանի դաստիարակչական գործունէութեան վրայ կարգաց անոր կենսագրութիւնը իր գլխաւոր հանգրուաններու նշումով: Ապա ընթացեց Երեւանի Բենամին ժամկոչեանի անուան աւագ դպրոցի տնօրէն պր. Յովհաննէս Կարապետեանի ողջոյնի խօսքը, որ տպաւորիչ ըլլալով մէկտեղ կը կատարէր ճշմարիտ բնութագիրը ժամկոչեանի տիպարին, լաւապէս ճանչցած ըլլալով անոր վաստակին ամբողջական երեսները: Ձերմ գնահատանքով ընդունուեցաւ հայրենի դաստիարակին ողջոյնի խօսքը:

Հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր Սահակեանի հունձքէն, լիբանանահայ մտաւորական եւ հրապարակագիր Գէորգ Տարօնի: Ան հանգամանօրէն ներկայացուց Բենամին ժամկոչեանի դաստիարակը անոր աշակերտած ըլլալու փորձառութեան անմիջականութեամբ, որ իր կազմաւորման վրայ խոր ազդեցութիւն ունեցած է դաստիարակ Բենամին ժամկոչեան հմուտ մանկավարժը: Ան պատմուած դրուագներով հաստատեց, որ

Բենամին ժամկոչեան գուրգուրոտ հայր մը եղած է իր աշակերտներուն համար, որոնց հոգեկան, ֆիզիքական եւ մտային կազմաւորման համար ամբողջական նուիրում ցոյց տուած էր:

Արդարեւ, Գէորգ Տարօնիի խօսքը պերճախօս վկայութիւն մըն էր աշակերտի տպաւորութեան:

Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Հայկազեան Համալսարանի ուսանողներ՝ Գարուն Պարտազեան եւ Սարին Գրաճեան նուազով Մուրատ Մելիքեանի քնարական ստեղծագործութեան մեկնաբանութեամբ:



Հայկազեան Համալսարանի դասախօս դոկտ. Արշալոյս Թոփալեան հատուածներ ընթերցեց «Յուշարձան ուսուցչապետ Բենամին ժամկոչեան» գիրքէն յուզումով համակերպ հանդիսականները: Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Սահակեանի հունձքէն Բենամին ժամկոչեանի հոգեզաւակ, գիտնական դոկտ. Արի Թօփուզիանեան:

Դոկտ. Արի Թօփուզիանեան որպէս «Յուշարձան ուսուցչապետ Բենիամին ժամկոչեան» գիրքի կազմողն ու խմբագիրը համառօտ ակնարկով մը ծանօթացուց գիրքը, որ ակնատեսի վկայութիւններով եւ ապրումներով հարուստ բովանդակութիւն ունի հեղինակի որբանոցային կեանքի, որպէս կամաւոր յեղափոխական գործունէութեան եւ ուսուցիչի կեանքի մասին:

Պատմական, կրօնական, ազգասիրական, լեզուաբանական եւ հայրենասիրական յօդուածներէ նմոյշներ կը պարունակէ գիրքը:

Գիրքին վերջին մասը յատկացուած է վկայութիւններու:

Բենամին ժամկոչեանի հոգեհարազատի ապրումով եւ անոր մտերմութեան մէջ ապրածի փորձառութեամբ դոկտ. Արի Թօփուզիանեան իր խօսքը եզրափակեց ուսուցչապետին անձէն կրած իր խոր տպաւորութիւններով:

Մաթոսեան ցուցասրահի մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան ընթացքին գիրքին վաճառքն ալ կատարուեցաւ:

Հայկազեանի ակադեմիական մթնոլորտին մէջ վերակենդանացաւ Բենամին ժամկոչեանի չիշատակը, որ լիբանանահայ կրթական կեանքի մէջ լուսաւոր էջերով հարստացած է:

Դանիէլ Վարուժանի «Դաստիարակ» բանաստեղծութեան վերջին քառեակը որքան կը պատշաճի Բենամին ժամկոչեանին.

Եւ այսպէս օր մ'երբ ըլլայ գոհ մը ձեր,

Պեճնելու մօտ եւ հոգեվարք: Պիտ' մնայ լոկ անոր այս մեծ մխիթարանք՝

Թէ՛ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի դեռ:

Ծ. Խ. Ստորեւ կու տանք երկու հատուածներ «Յուշարձան ուսուցչապետ Բենամին ժամկոչեանի» գիրքէն:

Ս.Գ.Հ. ՀՆՉԱԿԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

Հակառակ կուսակցական ըլլալու եւ չէզոք ուսանողական միութիւններուն վրայ հաւատք չունենալու, երբեք չէի մտածած ուսանողները կուսակցականացնել: Սակայն գոնուցեան ծնողներ, որոնք ուզեցին իրենց զաւակները կուսակցական դաստիարակութեան ենթարկել: Բայց ես, դպրոցին պատասխանատուն չըլլալու, չէի կրնար հակառակիլ. ու երբ հիմը դրուեցաւ Ուսանողական Միութեան, ինքնաբերաբար տրամադրուեցայ այդ միութեան:

Որչափ որ Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան կը պատկանէի, գաղափարական ամբողջ դաստիարակութիւնս ձեռք ձգած էի քանի մը դասախօսութիւններէ, որոնք լսած էի մեծանուն յեղափոխական Փարամազէն, քանի մը գաղտնի գրականութիւններէ, որոնք ուսանողական շրջանին կ'ընդօրինակէինք՝ ցրուելու համար Խարբերդի շրջակայ գիւղերը, պարբերաբար ստացուած ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՅԱՍՏԱՆ թերթէն, որուն կը թղթակցէր եղբայրս՝ Հրայր Թադեւոսեանի եւ Պոլսէն ստացուած քանի մը հատ ու կտոր ԿԱՅՄԵՐԷ: Աշակերտական վիճաբանութիւնները աւելի անձնական քննութիւններու եզրակացութիւններ էին, քան գաղափարական վարպետներու լուրջ հրատարակութիւններէ ձեռք ձգուած մտքեր:

Հոս ասպարէզ բացուեցաւ թէ՛ ուսումնասիրելու, եւ թէ՛ դասախօսելու: Ու մեր ուսանողական միութիւնը դարձաւ իսկական դպրոց մը:

Շաբաթական հինգ ժողով տեղի կ'ունենար. դասախօսական, բանախօսական, վիճաբանական (պատրաստուած եւ անպատրաստ), գրական: Թրքախօսութեան հայախօսութեան դարձած պատանիներու այս փորձերը կը նմանէին ծիծեռնակներուն թռիչքի առաջին փորձերուն:

Երեւակայեցէ՛ք: Ժողովի հրաւեր կը տրուի. «Պիտի դասախօս է Պ.Յ.Գ. կամ ուրիշ մը»: Ներկաներուն առջեւ հրաւեր կը տրուի դասախօսին, եւ հահ՛ բեմ կ'ելլէ դասախօս պատանին ու կ'ըսէ. «Ներեցէ՛ք այսօր չկրցայ պատրաստուիլ», կամ նման առարկութիւն մը: Ասիկա կը նկատուի յաջող քայլ մը, եւ հաւաքոյթին ղեկավարը կը ստիպուի քանի մը քաջալերական, գովեստի նմանող երկու բառ ըսել եւ ժողովը զբաղեցնել:

Ամենէն հետաքրքրականը՝ գրական ժողովներն էին, երբ հագիւ հայերէն խօսիլ սկսող պատանիներ՝ Սիամանթոյէն ու Վարուժանէն կը հոլովէին: Տակաւին տա-

րագրութեան նոր դարձած, ԱՐԵԱՆ ՁՈՐԷՆ անցած, ԱՐԻԻՆՈՏ ԱՆԱՊԱՏԻՆ մէջ խանձուած, ամենէն շատ պիտի ջանային Սիամանթոն նմանցնել, քանի որ ան ալ Կիլիկիոյ արհաւիրքէն քաղած էր նիւթերը իր ՊԱՐԻՆ, ԵՐԱՋԻՆ եւ վրիժախանձ ալ բազմաթիւ գրութիւններու:

Բայց ինչ եռանդ, ինչ խանդավառութիւն կար: Կիլիկիոյ յորդառատ անձրեւներուն տակ շատ անգամ ղեկավար ու անդամ միասին լայտերներով տունէ տուն կ'երթայինք՝ անդամները հաւաքելու, որպէսզի ժողովները արդիւնաւոր ըլլային:

Ավան-Առինջ թաղամասում մի փոքրիկ արտադրամաս կայ, որտեղ տարբեր տեսակի խմորեղեն են թխում, եւ որի ծառայութիւններից բնակիչները սիրում են օգտուել: Եւ հաս վերջերս արտադրամասում ամբողջ տեսականու գները բարձրացրել են, պատճառաբանելով, թէ Նոր տարի է գալիս: Մեզ ծանօթ է այս մտածողութիւնը, որ բնորոշ է հայ առեւտրականի նկարագրին: Հայ առեւտրականը վարժուել է իր շահոյթը հաշուել անգամներով (2-3 անգամ), երբ նորմալ առեւտրի համար 6-10 տոկոսանոց շահոյթն արդէն յաջողակ է համարում:

Եթէ ամբողջ աշխարհում Սուրբ Ծննդեան եւ Ամանորի սո-

նակատարութիւնների առիթով գեղջեր ու էթանացումներ են լինում, ապա մեզանում ճիշտ հակառակն է՝ գների աննախադէպ աճը շատերին է ստիպում ուրախանալու փոխարեն հոգեկան ծանր ապրումների մէջ ընկնել: Հայերի մեծամասնութեան համար յիշեալ տօները ոչ թէ ուրախութիւն են, այլ վերածուում են չնախատեսուած հոգսերի ու մտահոգութիւնների: Բավական է այս օրերին նայել մեր քաղաքացիներից շատերին, որպէսզի պարզ լինի, թէ ինչ գին ունի նրանց համար ուրախութիւն ասվածը: Ընդհանրապէս Հայաստանում գործող գնային քաղաքականութիւնը աշխարհին անհայտ ոլորտ է, եւ, իրավիճակից ելնելով, կարծես մեր իրականութեանն էլ չի ենթարկուում: Մինչդեռ, թուում է՝ գնագոյացումը պայմանաւորուած պիտի լինի համաշխարհային տնտեսութեան զարգացման կամ նահանջի ցուցանիշներով, շուկայում շրջանառուող պահանջարկի թելադրանքից ելնելով, ինչպէս նաեւ տուեալ երկրի համաքաղաքացիների ռեալ եկամուտներով: Սակայն մեզանում այս տրամաբանութիւնը վաղուց դուրս է եկել շրջանառութիւնից: Հայաստանում գները չեն գիշում կամ համարյա չեն գիշում արեւմտեան զարգացած երկրների գներին, սակայն անհամեմատելի է այդ երկրների ու Հայաստանի միջին աշխատավարձերի տարբերութիւնը: Հայաստանում գները այլեւս ոչ թէ փոխաբերական, այլ բառիս բուն իմաստով են կծու, եւ այն տպավորութիւնն է, թէ երկիրը լցուած է անանուն ու կատաղած գիշատիչներով: Բանն այնտեղ է հասել, որ նոյնիսկ յաճախ կարելի է լսել, թէ ուռճացած գները խոչընդոտում են երկրի զարգացմանը, մասնաւորապէս խօսքը տու-

րիցմի, բնակչութեան հանգստի կազմակերպման, որոշ ծառայութիւնների գների մասին է: Բանն այն է, որ չնայած նման անազան-գերին, ոչինչ չի արվում գնային ոլորտը կարգավորելու ուղղութեամբ:

Ստացում է, որ մի քանիսի գերշոյթ ստանալն աւելի կարելու է, քան ողջ բնակչութեան կենսամակարդակի մասին հոգալը... Ուրեմն նոր թանկացումների պիտի սպասել: Հայերը ոչ միայն առանց պանրի չեն կարող, այլեւ էլի բաներ կան, որոնք անհրաժեշտութիւն են մեր կենցաղում: Ու հնարավոր է, որ մի առաւօտ էլ դրանք թանկանան եւ այնպիսի բարձր գին ունենան, որ պանրի գները մարդասիրական թուան: Ամէն ինչ սպասելի է, մանաւանդ որ Ամանորին հաշուած օրեր են մնացել...

Մի առաւօտ էլ կը պարզուի, որ բնական եղեւնու ծառը մէկսենեականոց բնակարանի գին ունի... Ամէն ինչ հնարաւոր է, բացի չափի զգացումի գոյութիւնը: Թուում է՝ այս ամէնի մասին խօսելն էլ իրող է, եթէ ովկիանոսի լողորդի պէս տեղ չես հասնելու, աւելի շուտ, խօսքը տեղ չի հասնելու:

Բայց մի բան անառարկելի է, որ Հայաստանը մի քանի հոգու համար չէ, միայն այդ մի քանի հոգու երկիրը չէ, որ այստեղ ուրախ եւ անհոգ լինելու իրաւունքը բոլորին է տրված, բոլոր հայերին: Ու ամենակարեւորը... Հայերը նոյնպէս իրաւունք ունեն անկեղծ ուրախանալու, աշխարհի բոլոր քրիստոնեաների պէս տօնելու իրենց Տիրոջ ծնունդը... Մինչդեռ գնային նման միջավայրում եւ կեամուտների նման չափերի պայ-

Շար.բ էջ 19

A.G.B.U. - A.YA
GLENDALE-PASADENA
CHAPTER
New Year's Eve Galas
Friday, December 31st @ 7:30pm
Catering by "La Fogata"
Entertainment: DJ Extreme Sounds
"Stepan"
Surprises
RSVP: 626-794-7942
A.G.B.U. PASADENA CENTER
2495 East Mountain St. Pasadena, CA
TICKETS: ADULTS - \$100.-
Drinks Included
CHILDREN 4 -12 years old - \$60.-

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ ԱԶԳԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԻՍԽՆ Է ՈՒ ՅԵՆԱՐԱՆԸ»

Ռ. ԿՈՐԻԻՆ

Հոգեւոր եւ խորհրդաւոր միջնորդութեամբ, սիրոյ եւ յարգանքի ոգեշունչ արտայայտութիւններով վեր հանուեց եւ արժեւորուեց առաջնորդ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի կեանքի ուղին կալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան միջոցով կազմակերպուած հանդիսութեան ընթացքում՝ Գլենդէյլի հանրային գրադարանի դահլիճում, հինգշաբթի երեկոյեան Դեկտեմբերի 2, 2010 թիւին հոգեւոր հայրերի, թեմական-վարչական անձերի, գրող-մտաւորականների, ազգային-հասարակական գործիչների հոծ լսարանի ներկայութեամբ:

Գլենդէյլեան երեկոյ, դրսում, փողոցներում երփներանգ լոյսերի վառ ու շքեղ գարդարանքներ, ուրուութեան արտայայտութիւններ Քրիստոմասի եւ Ամանորեան տօներին սեմին գտնուելով: Անշուշտ հայերիս մօտ Յիսուսի Ծնունդը ընդունուած է Յունուարի 6-ը, որը տօնուած է Ամանորից յետոյ:

Հանդէսի մեկնարկումը կատարուեց ԿՀԳՄ նախագահ՝ բանաստեղծ Գրիշ Դաւթեանի միջոցով: Նա նախ ըստ սովորութեան միութեան գալիք միջոցառումների տեղեկութիւններ փոխանցեց դահլիճին, ըստ հետեւեալի. «Յունուարի 23, 2011 կատարուելու է գր. վարդան Թաշճեանի հրատարակած՝ «Ամենայն սիրով» գրքի շնորհանդէսը. Ռ. Կորիւնի «Արեւավառ իմ երկիր» երրորդ գրքի շնորհանդէսը՝ Փետրուարի 2: Նիկոլայ Ստեփանեանի գրքերի շնորհանդէս Մարտի 3: Մրցանակաբաշխութիւն է կատարուելու՝ Ապրիլի 7-ի հանդիպումին. լաւագոյն արձակագրին եւ բանաստեղծին Հրանդ եւ Մանուշ Սիմոնեանների հաստատած գրական մրցանակը՝ \$1,000. պարգեւ է տրուելու իւրաքանչիւրին \$500, նիւթերը պիտի ներկայացնել մինչեւ Յունուարի 31, 2011: Այս կապակցութեամբ մասնակցութեան պայմանները մամուլի միջոցով յայտարարուել են»:

Ապա՝ Գ. Դաւթեանը ողջոյնի խօսքով դիմեց մեծարեալին. «ԿՀԳՄ-ի համար պատիւ է մեր գրական նիստում ողջունելու գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանին՝ հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդին: Միութիւնս երախտապարտ է սրբագանին մեր առաջին ժողովածուի՝ «Ձայն բազմաց...» խորագրով գրքի մեկնասար լինելու կապակցութեամբ»:

Այնուհետեւ Գ. Դաւթեանը հակիրճ բառերով ներկայացրեց Յովնան սրբագանի բովանդակալից կենսագրականը, շնորհաւորեց ծննդեան տարեդարձը, որ գուգադիպում է հանդիսութեանս, ապա իր խօսքի մէջ չիչեց սրբագանի գրական հոգեւոր ժանրից մի պտղունց խորհրդածութիւն՝ «...Ներքին ձայն մը կը պատասխանէ՝ ես այն լոյսն եմ, որուն ծարաւի է քու հոգիդ, եկուր իմելու իմ լոյսն: Փնտուեցէք ձեր մէջ հայու ոգին, բոլորիս սիրտերը իրարու կապող անտեսանելի ոգեկան թելն է հայու ոգին, Քրիստոսի սեւիլքը, վարդանանց հաւատքը, Շնորհայիի, Նարեկացիի աղօթքի մրմունջն է այդ, Խրիմեանի, Կոմի-

տասի ձայնն է: Այս բոլորը խտացած են Սուրբ էջմիածնի կամարներուն տակ, Լուսաւորչի անմարկանթեղի լոյսին մէջ, ուր կը նորոգուի հայու հոգին: Թաթախեցէք ձեր հոգին այդ նոյն լոյսին մէջ»: Նա ոգեւորուելով Սրբագանի մտածումներից ամփոփելով իր խօսքն ասում է՝ «Սրբագանի անձը, մտածողութիւնը եւ խօսքը թաթախուած են Լուսաւորչի կանթեղի այդ սուրբ լոյսով, նա իր քարոզներով, թեմի առաջնորդի աշխատանքով ու իրագործումներով, իր հեղինակած ու հրատարակած հատորներով, այդ լոյսն է տարածում մեր ժողովրդի մէջ: Որդիական մեր սիրոյ ու յարգանքի հաւատարմութեամբ մատուցում սիրելի Սրբագանի հօրը»:

Բեմ հրաւիրուեց արուեստագիտուհի Անահիտ Իշխանեանը, որն իր սրտագին խօսքերով շնորհաւորեց սրբագանի հօր ծննդեան տարեդարձն ու մեծարանքի երեկոն, ապա ապրումով ընթերցեց հատուածներ սրբագանի հօր գրականութիւնից:

Սրբագանի գրականութեան եւ կրօնական կեանքի ոլորտներում նրա առաքելութեան փայլուն գործունէութեան մասին բանախօսեց Տէր Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեանը: Նա լայնօրէն անդրադարձաւ Սրբագանի հօր կեանքի ուղին լիօրէն ընդգրկող հայրենասիրութեան, էջմիասիրութեան, ժողովրդասիրութեան, ծառայասիրութեան, քարոզչականութեան եւ գրականասիրութեան, նրա բերած յոյժ գնահատելի նպաստին ու օգտակարութեանը: Հայր Սուրբն իր վերլուծական խօսքում ներկայացնում է Սրբագանի հոգեկան ծալքերի եւ հոլթեան արտացոլումն ու բնութագրումը, ուր ասում է. «Ճիգ մը այսինքն՝ բանալու Սրբագանի անձն ու գործը եւ երկուքին գուզորդուած զգայնութեան ետին փնտուել կարեւորը, հիմնականը, իր հարագատ շունչը...»:

Նա Սրբագանի մտածողութեան հիմնական անդաստանը, ակունքը, գրականութեան աստղձը յատկօրէն այսպէս է բնորոշում. «Սրբագանին մտածողական սեւեւումը ունի հիմնական ոլորտներ՝ Մարդը, Քրիստոնեայ Մարդը, Հայ Քրիստոնեայ Մարդը, Մարդ-Աստուած փոխարարութիւնը, Եկեցեցին եւ Հայութիւնը անշուշտ, Սրբ. էջմիածինը եւ ընկերային ու բարոյական ընհանրական հարցեր, հաստատուած եւ ամրացած Հաւատք-Եկեղեցի-Մշակոյթ եւեակ իրականութիւններու եւ արժէքներու վրայ, այդ երեքին հօր համագործակցութեամբ»:

Հայր Սուրբը խորաթափանց քննական հայեացքով դիտելով Սրբագանին որպէս հոգեւորական, որպէս առաջնորդ եւ որպէս հայ քրիստոնեայ այսպէս է եզրակացնում. «Նախանձախնդիր Հայ Եկեղեցու կարգերուն, բազմապահանջ իր գործակիցներէն եւ ինքնիրմէ, Սրբագանը միշտ եղած է անձնգիր եւ անխոնջ սպասաւորը Հայ Առաքելական Եկեղեցու: Անոր վիճակուած է Աստուած ներկայացնելու պաշտօնը մարդկային տկարութիւններու հեղեղին դէմ: Թէեւ, երբեմն, խօսք, գրիչ, կորով, նոյնիսկ քաշուութիւն կը թուին, սակայն բարբար: Բայց իր ժողովուրդի բոլոր կարիքներուն ընդառաջելու իր միտքն ու եռանդը, գրելու եւ

աշխատելու կորովը շնորհուած է Աստուծմէ»:

Գրութեան մի այլ պարբերութեան մէջ Հայր Սուրբն անբասիր հոգեւորական Առաջնորդի հոգեկան հարստութեան գրաւչութեան մասին այսպէս է արտայայտում. «Կը փորձես սիրել, ընկալել զինքը, փոխադրել քու սրտիդ մտերմութեան մէջ, բայց կը զգաս թէ բառերը անբաւարար են զգալու անոր խոր հոգին, հաւատքը, ներքին ոյժը եւ անոնց մէջ բռնուած խորունկ կեանքին գնացքը կամ անկէ անդին գտնուող ոլորտը...»:

Հայր Սուրբն Առաջնորդ Սրբագանի անձը մեկնաբանող գրութիւնը աւարտում է խոր յարգանքով. «Անոր համար՝ յարգանք իր անձին, յարգանք նաեւ իր վաստակին»:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեց Սրբագանի հայրը: Նա իր խօսքի նախաբանում ասաց՝ «Շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն ԿՀԳՄ վարչական կազմին այս երեկոյի կազմակերպութեան համար: Անկեղծօրէն պէտք է ըսեմ, որ բազում առիթներով ԿՀԳՄ մօտեցան ինձի այս հանդէսի համար, ոչ թէ չկամութիւն այլ վերապահութիւն ունեցայ, որովհետեւ ոչ մէկ անգամ, անկեղծօրէն, այդ յաւակնութիւնը չեմ ունեցած հանրութեան ներկայանալ որպէս գրող, եթէ գրած եմ իմ քարոզները, իմ զգացումները, իմ ապրումները պարզապէս ինձ տուած են ներքին հոգեկան բաւարարութիւն»:

Սրբագանի հայրը իր շնորհակալական խօսքի շարունակութեան ասաց. «Այստեղ մասնաւոր կերպով կ'ուզեմ իմ շնորհակալութիւնը յայտնել հոգեւոր եղբայրներուս գլխաւորութեամբ գերշ. Տէր Վաչէ Արք. Յովսէփեան սրբագանի հօր, իրենց ներկայութիւնը քաջալերանք է ինձ համար: Նաեւ իմ երախտագիտութիւնը կը յայտնեմ հոգեշնորհ Տէր Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեանին: Այն ինչ ես զգացի սիրելի հայր սուրբի ներկայացումը հոգին խոնարհեցնող բառեր, լիարժէք կերպով իմ տարիներու հովուական, գրական, քարոզչական, աշխատանքների պատկերը շատ կուռ եւ ամբողջական էին, որի համար իրապէս երախտապարտ եմ»:

Սրբագանի հայրը իր ելոյթի մէջ անդրադարձաւ մտածումների, որոնց չիշատակումը առաւել եւս մեկնաբանում է երեկոյի խորհուրդը՝ «Երեք մտածումներ կ'ուզեմ ձեզ հետ բաժնել, նախ այս երեկոն նմանեցնում եմ հայելիի մը, ուր ներկայացուեց իմ էութիւնը եւ աւելին, այս պահը ինձ պարտաւորեցնում է խոնարհուելու բոլորիդ առջեւ: Գրելը բնականօրէն տաղանդ մըն է՝ բնածին, որու շնորհիւ հաւատում եմ, որ Աստուած պարգեւած է անխտիր բոլորիս, տարբերութիւնը այն է, որ կամ կեանքի կը կոչենք, կամ կը մնայ թագնուած խորհուրդ: Ինչու մարդը, ինչու արուեստագէտը, ինչու գրողը, ինչու հոգեւորականը, ինչ որ ձգտում մը ունենայ ստեղծագործելու, որովհետեւ իւրաքանչիւր մարդ իր մէջ կը զգայ նաեւ այն ներքին զգացողութիւնը, որ Աստուածատուր կեանքը պէտք է ազդարարմանի ոճով արդարացնի, Աստուած խորանին ընծայի աւելին»:

Սրբագանը կարդաց վերջերս գրած իր մանրապատումներից երկունս՝ «Երկիսուտութիւն Աստուծոյ հետ» եւ «Մարդ առեղծուածը» նրանք ներկայացնում էին Աստուծուն եւ մարդ արարածին: Սրբա-

գանի գրութիւնները կարճ եւ ամփոփ, առաւելագոյնը մէկ ու կէս էջերի սահմաններում, հոգեշունչ պատումներ են:

Երեկոյի յայտագրում նախատեսուած էր, որ Սրբագանը դասախօսութիւն տայ. «Հայոց եկեղեցին եւ նրա բարեկարգչական հարցերը», նիւթի մասին, սակայն նա այսպէս մօտեցաւ հարցին՝ «Դասախօսութիւն չէ որ պիտի կարդամ ու չեմ ուզեր այդ տպաւորութիւնը թողնել, բայց ըսել կ'ուզեմ հետեւեալը, որ իմ եկեղեցական կեանքի երեսուն տարիներու ծառայութեան աւարտին կը զգամ, որ նոր հանգրուանի մը առջեւ եմ կանգնած... կ'ուզեմ իմ աշխատանքը այսուհետեւ կենտրոնացնել մեր եկեղեցու բարեկարգութեան չափազանց կարեւոր առաքելութեան վրայ»:

Սրբագանը անդրադարձաւ անցեալի հարիւր տարիների հանգրուաններին խոչընդոտներին որ դժուարացրին մեր եկեղեցու բարեկարգութիւնը: Սրբագանը իր մտածումների եւ խորհրդածութիւնների ծիրում չորս կարեւոր խնդիրներ առաջադրեց, որոնց շուրջ ցանկալի է առանձին մի գրութեամբ հանրութեան ներկայացել:

Սրբագանի հայրը իր ելոյթի աւարտին շնորհակալութիւն յայտնեց ներկայներին ասելով՝ «Խոնարհ սրտով եւ հոգով կ'ուզեմ իմ սէրը եւ Աստուծոյ օրհնութիւնը հայցել բոլորի վրայ, Աստուած օրհնէ ձեզ»:

Առաւել լուսաբանութեան համար պատշաճ է այստեղ մէջ բերում կատարել Հայկանուշ Մեսրոպեանի գրութիւնից մի հատուած Սրբագանին առնչուող, որը որպէս ներածական տպուած է՝ «Միտքէն դէպի սիրտ՝ ասոյթներու ընտրանի» գրքում.

«Սրբագանի հայրը հայրենիքում եւ Սփիւռքում յայտնի է աւետարանաշունչ քարոզախօսութիւններով, հրապարակումներով, յօդուածներով, հեռուստատեսային ելոյթներով, պատգամներով, ուղերձներով, հոգեշունչ մանրապատումներով ու յուշագրութեամբ, որոնք ամփոփուած են հինգ տասնեակից աւելի կրօնականեկեղեցական բովանդակութիւն ունեցող ժողովածուներում, որոնցից մօտ մէկ տասնեակը՝ անգլերէնով»:

Սրբագանի մտքերից՝ «Ով իր կեանքը կը լեցնէ մայր հայրենիքով ու Սրբ. էջմիածնով, ան յաւատ պայծառ է ու քաջ»:

«Առանց հայրենիքին եւ Սրբ. էջմիածնին մեր տունը կառուցած կը լլայսք աւագի վրայ»:

«Հայրենիքը գանձարան է, որուն մէջ ներդրած են իրենց կեանքը մեր նախնիք»:

«Հայ հոգեւորականը կարեւոր դեր ունի կատարելիք հայկական կազմակերպութիւններու միջեւ գործակցական ոգին ստեղծելու առումով»:

«Հայ եկեղեցին պէտք է դառնայ կեանքի ու առաւել կեանքի դուռը իր գաւազներու համար, ու միաժամանակ պէտք է հետեւի իր գաւազներուն, անոնց բռնած ուղիին, որպէսզի ի պահանջել հարկին սրբագրէ ու զգուշացնէ իր գաւազները սայթաքումէ»:

Երեկոն բովանդակալից եւ չիշատակելի աւարտին հասաւ գերշ. Տէր Վաչէ Արք. Յովսէփեանի աղօթքով:

Ներկայները հրաւիրուեցին հիւրասիրութեան:

Սրբագանի հեղինակած գրքերից բաժանուեց ներկայներին:

ԳԻՐՔԸ ԿԸ ՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ (Բանախօսութիւն Յովսէփ Նալբանդեանի «Լոյս» մատենաշարի առիթով)

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

ՅՈՎՍԷՓ ՆԱԼԴԱՆՏԵԱՆԻ «ԼՈՅՍ» մատենաշարի հատորները լուսաւոր յոյսի, հաւատի ու սիրոյ արգասիք են, հնարաւորինս նկարագրողուած ու թէեւ լաթակազմ չեն, սակայն պակաս էլ չեն երեւում, կաւճապատ թղթով են առաջին չորս գիրքերը (1-2 հատորները, որ միասին են, եւ չորրորդը՝ հրատարակուած են Լոս Անճելէոսում, իսկ երրորդը, հինգերորդն ու վեցերորդը՝ քաղաքամայր Երեւանում, Տիգրան Մեծ հրատարակչատան կողմից), մաքուր տպագրութիւն են բոլորն էլ, լայն ձև մակերեսով, բաւարար ծաւալով՝ 1 եւ 2 հատորները միասին 300 էջ են, երրորդը՝ 320 էջ, չորրորդը՝ 492 էջ, հինգերորդն ու վեցերորդը՝ 366-ական էջ, բոլորն էլ ընթերցանելի միջնորմներով, տպաւորիչ եւ հաճելի: Միով բանիւ, իր տեսակի մէջ՝ եզակի այս մատենաշարը գիտելիքների եւ տեղեկատուութեան վեցակնեայ աղբիւրի է նման, որից բխող յուսով եւ կենարար ջրերը ուսումնաստեղութեան ծարաւ են յագեցնում... Այս ամէնը սոսկական գեղեցկախօսութիւնն է, որ շեշտում ենք յաւուր պատշաճի, այլ՝ փաստերի ըստ արժանուոյն ընտրութիւնն է եւ բարձրամակարդակ մատուցուած արձանագրութիւն: Սպորտի վրիպումների, սառը ոճի, այլեւայլ սխալների ու սայթաքումների մասին մեզինքն լաւ գիտի հեղինակը, որ մեր ամփոփ կարծիքով ամէն ինչ պէտք է սկսի նորից եւ ըստ բնագաւառների՝ յաջորդաբար: Իւրաքանչիւր ոլորտը մէկ հատոր, որպէսզի օգտուողի համար հեշտ լինի փնտրութիւնը: Հիմա, որքան էլ թուալ համակարգած, այնուամենայնիւ, դժուարութիւններ կան արագ օգտուելու համար: Չափազանց արդիւնաւէտ կը լինի, օրինակ, ամբողջ աշխարհագրութիւնը մի հատոր, ներառեալ ճանապարհորդներն ու յայտնագործողները մի տեղ, մի գրքով: Կարող է հատորներն էլ այբբենական անել: 1. Աշխարհագրութիւն, 2. Բնագիտութիւն, 3րդ հատոր՝ Բուսաբանութիւն, 4. Գրականութիւն, եթէ չտեղաւորուի ա ու բ հատորներ անել, 5. Դիւանագիտութիւն, Դրամագիտութիւն, 6. Երաժշտութիւն, 7. Թատրոնի հատոր եւ այլն... Ցանկանում ենք անվտանգութեան վերացում, քանզի մի տեղ կիկերոն է գրուած, մէկ այլ տեղ՝ Յիցերոն, բայց չէ՞ որ նոյն անձն է, կամ-կամ որ կանոնակարգուի ամէն ինչ: Օգտագործուած է ընդհանուր գիտելիքներ, միւս դէպքում էլ՝ հանրագիտակ, ԱՍՏԵՂ ԷԼ ԿԱՄԿԱՄ Ի ԽՆԴԻՐ ԿԱՅ... Միւս դժուարութիւնը հայերէնն է, գրով

գրուած, ինքնաբերական չի լեզուն, ոճն էլ յստակութեան է կարօտում: Այդուհանդերձ, մեր յարգանքի վստահութիւնը քաջալերանքի մէջ է, խրախուսանքից է մղուած: Ինչպէս ութ տարի առաջ, չորրորդ հատորի լոյսընծայման առիթով ողջոյնիս խօսքում նշել եմ, այսօր էլ այժմէական կարծիքս: Միայն Աբովեանական Լուսաւորչականութեան դասերը մանրամասնօրէն սերտելով կարելի էր նման ազգանպաստ անձնուրացութիւն դրսեւորել, անձնական ուրախութիւնը վերածել անանձնական առաքելութեան, անշահախնդիր հետաքրքրասիրութիւն ծաւալել չորստիւն: Արդէն այս լոյս տեսած «Լոյս» երեւոյթը մի անգամուայ, կամ մի օրուայ ընթերցանութեան համար չի նախատեսուած: Հա էլ պիտի վերցնես ձեռքդ, փոքս գրասեղանիդ, փնտեսուածդ, պրպտես բառարանի ու ՀՀ ազգային մեծ հանրագիտարանի նմանողութեամբ: Սակայն չեմ կարող շրջանցել ու լռել որոշ ծածկուած, տափակ ասոյթների եւ արտառոց մի մէջբերման մասին չխօսելով, որի հեղինակը մեր նահատակ գրողներից մէկն է՝ Գրիգոր Զոհրապը: Բանն այն է, որ այս թեւերը խուզուած խօսքը բնաւ էլ թեւաւոր ասոյթ չի: Սա ազգադաւուրութեան տրամաբանութիւնն է կրում իր մէջ՝ վտանգաւոր կերպով արդարացնելով ցեղասպանութիւնը: Ահա այդ չարաբաստիկ մէջբերումը, որ դժբախտաբար տեղ է գտել 3րդ հատորի 154րդ էջում: Յայտնի չէ, թէ ի՞նչ առիթով կամ ինչի՞ համար է ասել Գրիգոր Զոհրապն այս՝ հայերիս համար ծանր խօսքը, բայց տրամաբանութիւնից զոտն ենք, որ այն թաքուն արնաջուր է մատակարարում թրքական մարդադպր ջրաղացին, խնդրեմ, կարող էք համոզուել: «Գիտութեան ստեղծած հակահեղափոխական դեղերուն դէմ, մահն ալ Աստուծոյ ստեղծած հակահեղափոխականն է: Կը հաւատամ, որ մեծ ջարդերը, ահագին կոտորածները, պատերազմներու մէջ կամ մահացու հիւանդութեանց ճարակած միջոցին, առողջարար պաշտօն մը, նախասահմանութիւն մը ունին», ... Տեսա՞ք թէ ինչպէս է արդարացուած հաւաքական ոչնչացում-բնաջնջում-ցեղասպանութիւն կոչուածը: Մի ժամանակ էլ, խորհրդային Միութիւնում դպրոցական մակարդակով արդարացում էր գիշարիչ գայլը, թէ անտառի սանիտարն է, այսինքն՝ հիւանդ կենդանիներին է որսում-ուտում, որոնք ի վիճակի չեն փախչելու... Յաջորդիւ պէտք է զգոյշ լինել նման շրջապատութիւնների վերաբերեալ եւ ընթացք չտալ: Թէկուզ թրքական պառլամենտի անդամ Գրիգոր Զոհրապն ասած լինի, որի

ազգանունն կէսն արդէն «գոհ» արմատն է... Ի շարս միւս սխալների ու վրիպակների «տեղ» են գտել նաեւ նմանօրինակ բաները՝ Գրիգոր Նարեկացու ծննդեան թուականը խախտուած է 4 տառով, 951ը, որն առայժմ ամենաստույգն է, իջեցուած 947ի, եւ էլ ուրախացայ, որ ուղիղ 1000 տարի անց ես եմ ծնուել՝ 1947ին, ու պատրաստուած էի Յովսէփին մաղարիչի ենթարկել, յանկարծ ի վնաս ինձ՝ չիշեցի, ստուգեցի ու տխրեցի, որ իմ լաւագոյն ընկերներից մէկի՝ վաղամեղի ու տաղանդաւոր բանաստեղծ, Աշոցքի գաւակ, Ղուկասեանի շրջանի Սեպասար գիւղի ծնունդ՝ Նորայր Բաղդասարեանի հետ չաճախ հինք լրջակատակ վիճարկում, թէ մեզինք ո՞րս ենք իրօք Նարեկացուց 1000 տարի յետոյ ծնուել... նա էլ 1951ին էր ծնուած... հատոր ճի դպրոցական աշխարհից, ՀՀ կրթութեան ու գիտութեան նախարարութիւնից ստացուած քաջալերանքներն անգամ լոյս չեն սփռում «Լոյսում» սպորտի մեթոդների վրայ... միւսն էլ պիտի մէջբերեմ՝ անյարգի սայթաքումներն այլեւ չյիշատակելու համար: Նախ, որ 1 եւ 2 գրքերը մէկ հատորով են հրատարակուած, բայց ներսում եւ ցանկում գատուած չեն... այդ համատեղ հատորի 229-րդ էջում այսպէս կոչուած «դասական» ուղղագրութեան կոպտութեամբ գրուած է, որ «մորեխի լսողութեան կեդրոնը կը գտնուի առջեւի թաթերուն վրայ», սխալ է... Ես ձկնորսական հոբբի էլ ունեմ, յաճախ եմ քեռի մորեխներ բռնել, ամրացրել կարթի կեռիկին, բանաստեղծական հետաքրքրասիրութեան համար էլ հաշուել եմ թէ՛ որքան է մեծ մնացեալը: Պէտք է գրուէր այսպէս՝ Մորեխի ականջները գտնուում են ծնկների վրայ, «առջեւ թաթերուն» վրայ չեն կարող լինել, քանզի թաթ չեն դրանք, ձեռիկներն են, դիտողովրդի պատրիկ ձեռքերի նման... Չկարծէք,

թէ մեր կողմից այս օրինակների յիշատակումն աւելորդ էր, ոչ: Բանն այն է սակայն, որ հանրագիտարանային արժէքն է դա թեւադրում եւ պահանջում, ուրեմն, պար մտնողը ոչ թէ պիտի քամակը տարուբերի, այլ այնպէս պարի, որ քոչարին լամբադալից ու պրոտապարից գատուի-տարբերուի-ընկալուի-հասկացուի եւ նոր միայն ծափահարուի, ոչ թէ սուլոցի դատապարտուի հենց սկզբից... Այնուամենայնիւ, սոյն բազմահատոր մատենաշարի հեղինակային դերն ու նշանակութիւնը, յիշուի, կարեւոր է, նպատակաւորութեամբ թիւերը՝ յստակ: Շրջանառութեան շառաւիղը միամիտ դպրոցականից մինչեւ քմահաճ կաճառականն է ձգուած: Ահա թէ ինչ է ստեղծել մեր անհանգիստ բանասէր, անդուլ մանկավարժ, շրջահայեաց մտաւորական, իւրատիպ գրող, կոմիտասեան հասկացողութեամբ՝ աշխոյժ բանահաւաք, հիմա էլ՝ արդէն հմուտ հանրագիտարանագէտ Յովսէփ Նալբանդեանը: Իր ասելով, հայերենի եւ Սփիւռքի դպրոցներին, հանրային գրադարաններին մատաղի պէս ճրիպար բաժանող-նուիրաբերողի վարքագիծ ունի, այս առումով էլ նա եզակիներից է, ովքեր իրենց սուղ միջոցներով ճանապարհ են ելնում՝ նրա խորհուրդներով խորթութիւնը հարթելու, սերունդների ուսման ծարաւը յագեցնելու բարի կամեցողութեամբ շմտածելով, որ իրենց իսկ անձնագոհութիւնը՝ Մանթաշովեան բարեգործութեան դասական շրջոյթի վերածուած՝ ուղեկցում է ամենուրեք... Քանի որ սոյն աշխատութիւնը մնայուն արժէք է ձեռք բերելու, ուստի կ'ուզենայինք, որ հովանաւորչական յետագայ սխրանքը կրկնուէ՛ր՝ իբրեւ գօտեպնդող նեցուկ գալիք հատորների յաւելեալ պատասխանատուութեան, հաւաստի ու համոզիչ ուսումնասիրութեան, պատշաճ խորհրդատուութեան ու ազգօգուտ սրտացաւութեան համար:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ


PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամայ ապահովութեան սիստեմ:


Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Բայրազիոպթիք բուժում:
 Գլխացաւ, վզի, մէջքի, բոկային եւ մկանային ցաւեր:
 Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատճառած
 վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՅԱՐՈՒԹ ԵՐԷՑԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ Առաքինի Մտաւորականը

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅԹ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մեր սիրելի Յարութ Երէցեանի անժամանակ մահուան քառասունքի լրման առիթով, յիշատակի այս տողերը թող շող մը լոյս տան բոլորիս երբ իր մեզմէ բաժանումը թողուց մեզ ցաւի եւ տրտմութեան խաւարին մէջ: Հարուստ չճանաչեալ Յարութ եւ սակայն իրեն յատուկ առաքինութիւններով հարստացաւ եւ հարստացուց իր կեանքը, «Ապրիլ» գիտող Յարութը, որ իր գրատունը դպրոցի եւ մտաւորականներու լուրջ ժամադրավայրի վերածած, անհատնում գիրքերը դարձուց վկայականները իր մտաւորական եւ արուեստագէտ մարդու համեստ անձին: Սուրճի համար ներս գրասենեակ պիտի երթայիր, եւ սակայն ինք գիրքերուն մէջ կը դիմաւորէր քեզ, եւ երկուքդ ալ հոն կը մնայիր: Սուրճը՝ յաջորդ անգամ: Գրասենեակը կը մտնես դասարանի նման ուր բանախօս մը գիրքի ներկայացումը մը կը կատարէ: Գրատունը մը որ մտաւորականի՝ մը տնօրինութեան ձեռքն է եւ ո՛չ այլ մարդու: Այս է տարբերութիւնը:

Թէեւ իմ ծանօթութիւնը Յարութի հետ նոր կը թուի ըլլալ, սակայն 40 տարիներու հեռակայ ծանօթութիւն մը եղած է, առանց զինք տեսած ըլլալու, Արեւելեան ասիոյ մեր կայքերէն, գիրքի ճամբով եւ հեռախօսով: Կը հեռաձայնէր գիրքեր ուղարկելու, կը զրկէի իմ այն ատենուս հրատարակութիւններէս, եւ ինքս կը հիանայի Ապրիլ Գրատան այս վաստակաւորին երբ իր պարկեշտ խօսքը գործի կը վերածէր, սոսկ հեռաձայնի վրայ: Կը ստանար ու կը վճարէր: Մեծ եղած էր վստահութիւնս իր վրայ: Եկանք Գալիֆոռնիա եւ անշուշտ առաջին իմ փափքներէն մին եղաւ այցելել «Ապրիլ» եւ անձամբ տեսնել Յարութը: Տեսայ իր ժպիտը աչքերուն, ցած ձայնով եւ խիստ սակաւախօս, յարգալից վերաբերմունքով եւ գիտուն մտաւորականի խորքով: Աչքերն էին խօսողները: Գիրքերդ, կ'ըսէր, օգտակար եղան, եւ ուզողներ եկան տեսնելու եւ առնելու: Իմ պատասխանս կ'ըլլար շնորհակալութիւն յայտնել որ ինք էր առաջինը գիրքերս Գալիֆոռնիա հասցնողը, ինչպէս նաեւ փոխարժէքը զրկողը ըստ արժանույն: Կարգը եկաւ «Ազգապատում»ի

հատորներու: Հոս Առաջնորդարան ներկայ էր Յարութ եւ թաւարի առաջ երբ վերջին հատորը ընծայուեցաւ: Կ'ըսէր, երբ վերադառնաս Ֆլորիտայէն, մի քանի օրինակ ուղարկէ եւ կամ հետդ բեր, քանի որ փափաքողներ պիտի ըլլան: Ֆլորիտայէն չորս օրինակ զրկեցի, եւ հետս ալ վեց յաւելեալ օրինակներ բերի ու յանձնեցի Յարութին: Խօսուն ժպիտը միշտ աչքերուն, գնահատեց, եւ պահ մը հաշիւ մը ընելով այսքան պիտի ըլլայ պարտքս ըսելով ուզեց գոհացնել գիտ: Ըսի, Յարութ, վճարումի մասին մի մտածեր, այս տասը գիրքերը իմ կողմէ նուէր են «Ապրիլ» գրատանդ: «Չըլլար», ըսաւ, ու ես ըսի թէ որքան հպարտ կը զգանք մենք գմեզ երբ գրատունդ կ'այցելենք: Հոս թէ՛ հայրենիք է եւ թէ՛ դպրոց: Այս հրաշալի հարիւրաւոր հաւաքածոները մեզի պարտաւոր կը թողուն քեզի: Պնդեց, եւ սակայն իմ փափաքս կատարուեցաւ:

Երկու վայրկեան ետք Յարութ գնաց եւ գիրք մը ձեռքին եկաւ գայն ինծի նուիրելու: Հոս եւս մեր բարեկամին իսկական մտաւորական ըլլալը ստուգուեցաւ ո՛չ թէ փոխարէն գիրք մը նուէր տուած ըլլալուն համար, որ շատ դիւրին պիտի ըլլար, այլ մանաւանդ ինչ տեսակ գիրք գատած ըլլալուն համար այդ վայրկեաններուն մէջ ու վերադարձած: Մտաւորականի մը յատուկ խորաթափանց միտքով գատած էր բոլորովին նոր հրատարակուած Կիլիկիոյ Սահակ Բ Խապայեան Երջանկայիշատակ Կաթողիկոսին նուիրուած իր հոգեւորական ծառայութեան եօթնասուն տարիներու երկայնքին այն բոլոր վաւերագիրներու հաւաքածոն գոր պատրաստած էր բծախնդիր կերպով խոշոր հատորի մը մէջ հանգուցեալ Սանդրո Բենզոնի թեման ու հրատարակած Երեւանի մէջ: Հատոր մը որուն մասին չէի լսած անգամ: Եւ ահա նուէր մը այնքան օգտակար իմ աշխատանքներուս համար որ անկարելի բան էր որ վայրկեաններու ընթացքին երեւան գար: Այդ միայն Յարութ Երէցեան կրնար ընել, առաքինի մտաւորական եւ հայերէն գիրքերու անպառ պաշար ունեցող եւ ընթերցող Յարութը միայն:

Պիտի ապրիս. «Ապրիլ»դ վկայ:

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՍ ՀՈՒՆԿՈՒՏԸ

Մարուակուած էջ 7-էն

խաչակնքում: Անշուշտ քարոզչի խօսքերից ոչինչ չեմ հասկանում, բայց միջավայրն ու հաւատացեալների լրջութիւնը խորը ակնածանք են առաջացնում իմ հոգում: Մի տաս րոպէ նստելուց յետոյ դուրս եմ գալիս եկեղեցու ու մոտքին, իմ էլեկտրական մոմն եմ վառում մի կոճակի սեղմումով ու խաղաղ հոգով շարունակում եմ ճանապարհս՝ այս անգամ յետընթաց ուղղութեամբ, դէպի տուն:

Փողոցն արդէն աշխուժացել է: Մարդիկ կամաց-կամաց շատանում են մայթերին, հեծանիւ վարողները նոյնպէս ժամանակին հագուազիւտ կը տեսնէիր հեծանիւ վարողների: Բենզինի գնների աճման պատճառով բազմաթիւ մարդիկ, աշխատաւորներ աշխատանքի գնալ-գալու համար օգտուում են հեծանիւից, մի երեւոյթ, որ վաղուց է արմատաւորուած ողջ Եւրոպայում:

Յանկարծ տեսնում եմ մի տղամարդու, որ միանգամայն անթոյլատրելի տեղից, դիմացի մայթից վազելով գալիս է դէպի ինձ: Ծանօթ դէմք է, բայց տեղը չեմ բերում:

- Հենրիկ, ես եմ, Գէորգը, չե՞ս յիշում,- ասում է նա:

- Իսկապէս չեմ յիշում-ասում եմ ես, - դա դեռ ոչինչ, ինչո՞ւ դիմացի մայթից փողոցը կտրեցիր, չէ՞ որ վտանգաւոր է...

- Ախր երեսուն տարի է քեզ չեմ տեսել եւ երբեք առիթ չի եղել իմ շնորհակալութիւնը յայտնել քեզ, դրա համար էլ կարգը խախտեցի:

- Կարիք կա՞ր դրա համար վտանգի ենթարկել քեզ, ինչի՞ համար է քո շնորհակալութիւնը:

- Խօսքս երեսուն տարի առաջուայ մասին է: Մենք նոր էինք եկել Պարսկաստանից ու փաստաթղթեր էին լրացնելու Կրին քարթեր ստանալու համար: Դու լրացրիր մեր բոլոր թղթերը եւ ոչ մի վարձատրութիւն չուզեցիր դրա համար:

- Հա՛, այո, յիշեցի, այն տարիներին ծանօթներին օգնում էի նման հարցերում, թէեւ գրեթէ անզրկէն չգիտէի, էս ո՞ւր ես գնում այս ժամին:

- Աւտոբուսին եմ ուզում հասնել, ես եմ բացում խանութը, Տառնթառնում եմ աշխատում: Հենրիկ ջան, ի՞նչ կը լինի, հեռախօսիդ համար տուր: Օրերը ցրտում են, մի օր խաշի եմ հրաւիրելու ձեզ...:

Թելադրում եմ հեռաձայնիս թիւը ու բարի ճանապարհ մղթելով երեսուն տարուայ ծանօթիս ու շարունակում եմ ճանապարհս:

Իրօք շատացել են մարդիկ, մեքենաները: Հոլիվուտի այս շրջանի մարդիկ հիմնականում

չափազանց համեստ են հագնուում, մեքենաներ էլ հասարակ են, հին: Միայն օրուայ ընթացքին են երեւում թանկարժէք մեքենաները: Եկէք խոստովանենք, որ այսօր աւելի հանգիստ ու անվտանգ է Հոլիվուտը, քան նախկինում, եւ օրէ օր աւելի է կերպարանափոխուում: Իսկ մեքսիքացիների բազմաքանակ լինելը մեզ հայերիս բնաւ չի խանգարում: Նախկինում շատ աւելի հայեր էին ապրում Հոլիվուտում: Տարիների ընթացքում ում ձեռքը, որ «գրպանին հասաւ» թողեց Հոլիվուտը ու հաստատուեց Կլենտէյլում եւ այլ «հանգստակէտ» վայրերում:

- Չէ՛, ո՛չ, ես չգնացի, թէեւ կարող էի: Ես սիրում եմ Հոլիվուտը: Ես սիրում եմ աղմկոտ, շարժուն քաղաք: Մենք հոլիվուտցիներս շատ չենք սիրում Կլենտէյլ գնալ, եւ եթէ գնում էլ ենք, միայն մշակութային ձեռնարկներին ներկայ լինելու եւ բարեկամներին այցելելու նպատակով:

Ես, որ Սատանայի էլ չեմ վախենում, սոսկում եմ Կլենտէյլի ոստիկաններից ու մշտապէս լարուած վիճակում եմ վարում մեքենան Կլենտէյլի տարածքում: Եւ, որքան որ տուգանք եմ ստացել դա եղել է Կլենտէյլում, եւ հիմնականում պարսպ բաների համար:

... Այսօր Նոյեմբերի քսանն է: Մէկուկէս ժամ քայլել եմ: Յոգնել եմ, խօսք չկայ: Բայց հոգիս խաղաղ է: Բազմաթիւ մանր-մուկ երեւոյթների բովում կրկին համոզուեցի, թէ որքան քիչ բան է պէտք, որպէսզի մարդ ուրախ եւ երջանիկ զգայ իրեն: Մի՞թէ չի կարելի առանց վնասելու մէկը միւսին բաւարարուել այն ամէնով ինչ տուել է քեզ Աստուած:

Համերգախելատ այս օրերին չգիտես ո՞ր գնալ, ո՞ր ձեռնարկին նախապատուութիւն տալ: Եւ այս միմեանց խանգարելու, միեւնոյն օրերին իրար խաչաձեւող ձեռնարկների մրցավազքը արդէն «օրէնքի ուժ» է ստացել: Ամսի քսանմէկին երկու ձեռնարկ կայ: Որոշել եմ գնալ առաջին ձեռնարկին՝ ներկայացման, որպէսզի իմանամ «ինձ հոգեբան պէ՞տք է, թէ ոչ»: Իսկ միւսը՝ «Լեզենդար» կոմպոզիտոր Արթուր Գրիգորեանի մասնակցութեամբ կայանալիք բարեգործական համերգն է՝ ի նպաստ Արցախի:

Կարող եմ վստահօրէն ասել, որ այդ շնորհալի կոմպոզիտորը հագիւ թէ իրեն թոյլ տար իրեն որակել որպէս «լեզենդար» կոմպոզիտոր: Վարժուել ենք մերօրեայ չափանիշների չարաշահման արշաւին, բայց ա՛յս աստիճանի: Պարզապէս ամօթ է, չ'ասելու համար ընդվզեցուցիչ:


... էս էլ մեր՝ հոլիվուտցիների կողմից:

Հրապարակի վրայ է

«Յուշերու Բագին»

հեղինակ՝ Արմէն Ղարիպ (տպ. Պէյրուք 2009) Գինը՝ \$20

Ստանալու համար դիմել «Մասիս» Մարաթաթերթին 1060 N Allen Ave Pasadena, CA 91104 626-797-7680



ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԱՐԵՒՍՏԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ

Շարունակում է 6-էն

չտաս իրենց հնագույն եկեղեցիներում ծնծողայ խփելու, բարձր ձայնով երգելու եւ գինի խմելու: Պէտք եղածի պէս զգուշացրու չի շեղվում քահանաներին, որ եթէ այսուհետեւ շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ որեւէ շինութիւն կառուցեն, նոյնպէս ենթարկուելու է քանդման»:

Հարկ է նշել, որ հայկական եւ թրքական պատմաբանական աղբիւրներում եւս եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձեւափոխման փաստերը շատ են: Յայտնի է, որ Կ. Պոլսի գրաւման յաջորդ օրը Ս. Սոֆիա տաճարը վերածուց մզկիթի: Նոյն ճակատագրին արժանացան նաեւ Ս. Առաքելայնի տաճարը եւ այլ եկեղեցիներ: Սուլթանական հրովարտակով արգելուց նաեւ նոր եկեղեցիների կառուցումը:

Այսօր քաղաքային երկրորդ շարունակուց նաեւ յետագայ դարերում ոչ միայն Կ. Պոլսում, այլեւ պատմական Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում: Այս կապակցութեամբ Ժ. Գ. արի ժամանակագիր Յովհաննիսիկ Մարեցիին նշել է. «Իսկ Ռ-ԼԲ (1583) թուականին, դարձեալ հրաման եղեւ ի Մուրատ խոնդկեարէն գորապետաց եւ գորաց իւրոց՝ ելանել ի վերայ Յերեւանայ եւ առնուլ գնա: Եւ եկին իսկ եւ աւերեցին, եւ բազում եկեղեցիք քակեալ, զբարինս ի շինուած բերդին տանէին, որ եւ կամեցան զմեծ եկեղեցին, որ Յերկու երեսի ասի, եւս քակել»:

Մի այլ ժամանակագիր էրզրումի բերդում կատարուած աւերածութիւնների մասին յայտնել է հետեւեալը. «...Բագում եկեղեցիք, զորն երեւի»ն եւ զորն արարեալ են մզկիթ եւ զորն քակեալ կան: Եւ է զերեզման սրբոյն Սահակայեւ Յօսեփայ, որ այժմ եկեղեցին անարատ եւ է ի ձեռս անհաւատից»: «Եկեղեցիք բազումք, որ այժմ է ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամբարանոյք եւ զորն քակեալ եւ քայքայեալ են այժմուս չեն երեւիլ»:

Իսկ Ժ. Գ. դարի թուրք հանրայայտ ճանապարհորդ էվլիա Չելեբին Կարսում եկեղեցիները մզկիթի վերածելու մասին արձանագրել է հետեւեալը. «Կարսում գտնուող «Սուլթանայն էֆենտի» մզկիթը մուսուլմանական հաւատի ոճով կառուցուած, շքեղ արտաքինով լաւ

արբավայր է: (Նախկինում) այն քրիստոնէական եկեղեցի է եղել եւ ձեւափոխուել է մզկիթի: «Հիւսէյն քեդիուզա» մզկիթը նախապէս եղել է քրիստոնէական հոյակապ մի տաճար, որ կոչուել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանական հրամանագրով այն եւս ձեւափոխուել է մզկիթի եւ այդպէս փրկուել անհաւատների ձեռքից»:

Սուլթանական ֆերմաններից իմանում ենք, որ նոյնիսկ նախկին եկեղեցիների վերանորոգման համար անհրաժեշտ էր դիմել կայսերական դիւանին յատուկ թոյլտուութիւն ստանալ: Մահմետականներից կազմուած յանձնաժողովը ստուգում, արձանագրում էր վերանորոգման ենթակայ կէտերը եւ այնուհետեւ տալիս էր արտօնութիւնը այն պայմանով, որ նորոգումը կատարուեր նախկին շինութեան նիւթով եւ միեւնոյն չափերով: Այս մասին եկեղեցիների նորոգման վերաբերեալ սուլթան Համիտ Ա.ի հրովարտակում (22 Յունուար 1774 թ.) ասուած է. «Նախապէս ուր ուրեք եւ իցէ քաղքի մօլլայն եւ այլք կարդացողք եւ տաճիկք մեծարմեծք, զնացեալ աչօք իւրեանց տեսնել եւ քայքայեցեալ աւերեալ տեղեանք վերահասու լինցին, երկայնութիւնն եւ լայնութիւնն այնը եկեղեցուց ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի եւ ոչ պակաս՝ զննիցեն, տեսնել եւ վկայեցեն եւ ի գիրս աւանդեցեն հէօճէթիւ, ապա յետ այնը՝ հրամայեցեալ է զաւերեալ տեղիս նորոգել եւ շինել ոչ աւելի եւ ոչ պակաս, մի լիցին ձեռնամուխ ըստ այլք, զի մի յետոյ վնասիցին»:

Եկեղեցիների ստուգման վերաբերեալ սուլթան Աբտիւլ Համիտ Ա.ի ֆերմանում նշուած է, թէ ինչպէս մի շարք մոլեռանդ թուրքեր իրենց չարամիտ նպատակներով օգտագործել են եկեղեցիների վերանորոգման առիթը եւ անտեղի բողոքներ ներկայցրել կառավարական պաշտօնատար անձանց եւ մահմետական հոգեւորականութեանը: Սրանք, օգտագործելով առիթը, իրենց հերթին անարգել գործադրել են հայ ռայայի նկատմամբ իրենց թշնամանքի ու ատելութեան կիրքը. «Այլեւ յոմանս քաղաքս եւ գիւղս, եւ յայլն նահանգս ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ եւ կամ վնասս հատուցա-

նելոյ մաքառին ընդ խղճալի հայոց ազգին եւ երթեալ առ մօլլայն, առ վօյվօտայն եւ առ մեծամեծ անձինս բառնալով՝ դրդեն գնոսա ի բարկութիւն, զի կամ տուգանօք վնաս հասուցեն եւ կամ զնորոգեցեալ տեղիս քայքայեցեն, մեծամեծ քնտէրութեան իմոյ, հաւատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ գորացուցանեն զբարկութիւնս իւրեանց, եւ լինին վրէժխնդիր խղճալի ըստ այլն, զի կրկին տուգանք եւ փող առցեն, եւ զծարաւս ազահութեանց յագեցուցեն, եւ եթէ ոչ տայք գտուգանս ասեն ըստ այլն ի բանտ եւ ի տանջանս մատնեմք ձգեք, որով, երկուցեալ վշտացուցանէ զազգն հայոց, եւ նոքա ոչ կարացեալ տանին զայսպիսի նեղութիւնն, թողումն գտեղիս եւ գտուսն եւ փակողին անտի, լինելով ցիր ու ցան եւ ոմանք եւս ի բանտ արգելեալք եւ շոշտանկեալք այս վայրութեամբ գրաւեն զկեանս իւրեանց»: Այնուհետեւ սուլթանական ֆերմանում նշուած է, թէ ինչպէս նոր պաշտօնի անցած կադիները, մոլլաները, հարստանալու տենչով համակուած, զանազան որոգայթներ են հիւսում եւ գուտանքներով, կաշառակերութեամբ նեղում եւ վշտացնում հայ ռայային:

Փաստերը ցոյց են տալիս, որ Ժ. Գ. ընթացքում եւս այս կամ այն պատրուակով հիմնայատակ քանդել են մեծ թուով եկեղեցիներ: Բերենք մի օրինակ թուրքերի վերաբերող թրքական վաւերագրերից. «1720 թ. Հոկտեմբերին թուրքաթուրք Գառասուն (մանկանց) եկեղեցին ընդարձակելու համար երբ կառավարութիւնից թոյլտուութիւն է ձեռք բերուած, մահմետական բնակչութիւնը գազազելով (22 շեվվալ, Կիրակի օրը), եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ աղմուկ աղաղակ բարձրացնելով, յարձակուած են, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում»: Այս իրադարձութիւնը արձանագրուած է նաեւ հայկական աղբիւրներում: Թուրքութեւ պահուող «Պատկերահանի Աւետարան» կոչուած մի

ձեռագիր լիշատակարանում նշուած է. «Փէրման բերին գտուրք քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման եւ նորոգիցին մինչեւ ոչ թամամին ժողովեցան թոխաթուայլազգիրն ամենայն զրոհ տուեալ հասին ի սուրբ Գառասունք եւ քակեցին»:

Աստուածատուր, Յովհանն եւ Առաքել ակնեցիների ժամանակագրութեան մէջ (ԺԼ. դար) Ակնում եւ շրջակայքում եկեղեցիների քանդման մասին խօսելիս նշուած է հետեւեալը. «Գարձեալ թուին ՌՄԼԲ (1783), որ մտաք Ստամպոլ Տաճիկներն արգուհալ էին տուեր թագաւորին, թէ Ջոպի Մուստաֆան նոր ժամ է շինել տուեր, թագաւորն ալ խափուծիպաշին թաչին արաւ, թէ «գնա տես թէ սուտ է, թէ իրաւ»: Մեծ պասին իքինճի (երկրորդ) Կիրակին (Մարտի 12ին) խափուծիպաշին եկաւ, ելաւ ժամուռն վրայ. Տաճիկները ոտք կոխեցին, թէ ժամ է պարիսպ չէ: Սափուծին ալ մնացածն ալ քակել տուաւ, քարն աստիս անդին տէվր ընել տուաւ: Շատ ստակ գնաց թէ խափուծուն, թէ խատուն, իլամին, տէվր կարծեմ թէ ճ (100) քեսէ ստակ գնաց, պատն ալ մնաց այնպէս երեսի վրայ»:

Ժ. Գ. դարի հայ ակնաւոր հրապարակախօս եւ պատմագիր Երեմիա Քէօմիւրճեանը եւս սրտի կակիծով տալիս է թուրք տիրակալների կողմից քրիստոնէական եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու նկարագրութիւնները, ինչպէս նաեւ ժողովրդի դառը բողոքը. «Յայն ժամ եւ սուգ առնոյր երկրին եւ ողբայր երկիր վասն դիպուածոյ մերում թշուառութեանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտահազին եւ արեւ ծածկեցաւ եւ հողս սաստկագին յոյժ յոյժ մինչեւ ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն եւ փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, եւ ծովն ալեօքն փրփրայր եւ բարձրանայր ընդ պարիսպն եւ անձրեւ գայր»:

(Շարունակելի)

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

BURBANK AIRPORT
BID REQUEST
General Contractors

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-33, Module 12.7 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, January 20, 2011. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Forty (40) Single Family Condo Units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for January 6, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

Ս.Դ. ՅՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շաբաթական 8-էն

ուեցան երեք դասարանի: Մեզի կը բաւէին:

Կուսակցութիւնը ելեւմուտը հաւասարակշռելու համար իր գանձէն տրամադրեց: Ինծի առաջարկուեցաւ 100 ոսկի: Նկատի ունենալով կուսակցութեան դրամական կացութիւնը՝ մերժեցի եւ ըսի. «50 ոսկի կը բաւէ»: Հակառակ այս աչք ծակող իրականութեան, օր մը՝ գիտնալով թէ Ամերիկայէն զրկուած գումարները պիտի հատնին, առաջարկեցի տասը հազար տուար թերթին անունով, եւ տասը հազար դպրոցին անունով դրամատուն դնել: Պատասխանատուներէն մին ուղղակի ճակտիս ըսաւ. «Ամսականներդ կը մտածես»...: Շշմեցայ եւ լռեցի: Անցան ամիսներ, դրամը հալեցաւ գնաց, առանց որոշ օգտակարութիւն մը ունենալու: Բայց թերթ եւ դպրոց չքաւոր օրեր ունեցան: Ո՛չ ոք խղճահարուեցաւ, ո՛չ ոք պատասխանատուութեան կանչ ունեցաւ:

Մնայուն ուսուցիչներն էին Պ.Պ. Արիս Գալֆայեան (յետագային՝ Տ. Կարապետ Աւագ Քահանայ, Հովիւր Գալիֆորնիոյ Եղեմ քաղաքի, ուր վախճանեցաւ), եւ Սարգիս Տիրուկ (յետագային՝ գոհ հայնու ռճրագործութեան): Այցելուներ էին՝ վճարումով՝ Պ.Պ. Երուանդ Զօրեան (մահացած Հալէպ), Միսաք Սմիկեան (մահուան վայրը անծանօթ), Եղիա Իզմիրլեան (մահուան վայրը անծանօթ): Իսկ ձրի կը դասաւանդէին՝ Պ. Պ. Անդրանիկ Կէնճեան, Գուրգէն Թահմազեան (երկուքն ալ Փարիզ մահացած), Վարդան Գալֆայեան (Պէրլութ մահացած), Ղազարոս Ղազարոսեան եւ Տիրգրան Զէյթունցեան (երկուքն ալ Գահիրէ մահացած), Վահան Ժամկոչեան (Իզմիր գերի ինկած եւ ճամբան

խողխողուած», Վահրիճ Քէօքճեան (այժմ կ'ապրի Փարիզ):

Սաներուն բացարձակ մեծամասնութիւնը հնչակեան ընտանիքներէ էր, որով անզգալաբար դպրոց եւ Ուսանողական Միութիւն խառնուեցան, եւ Կեդրոնականը եւ Ուսանողական Միութիւնը դարձան իսկական մշակութային վառարանները, ուր թրծուեցան բաւական խոստմնալից պատանիներ, որոնցմէ քանի մը հատին մասին անհրաժեշտ է յուշերուս մէջ տեղ տալ:

Ասիկա թէ՛ սաներուն եւ թէ՛ դպրոցին իրաւունքն է:

Դպրոցը վարի յարկը սենեակ մը ունէր, որ խոստացուած էր ուսուցիչներէն մէկուն: Թողներէն հարցին հետ կապ չուներ ուսուցիչները, քանի որ յարմար չեմ տեսներ անունը տալ: Սենեակը վարձուած էր Պ. Յովհաննէս Գալֆայեան անուն Ռամկավար պարոնէ մը, որ հակառակ պարպել խոստանալուն՝ չէր կրցած ուրիշ տեղ գտնել, եւ կ'ուշացէր յանձնումը: Օր մըն ալ գանգատի եկաւ թէ սաները ջուր եւ փոշի կը թափեն մահիճին վրայ: Դասարանին յատակը տախտակեայ էր եւ լայն ճեղքեր ունէր: Բաւական նեղուեցայ եւ ծանրօրէն յանդիմանեցի սաները: Յետոյ իմացայ թէ ուսուցիչը ըրած էր, զգուցանելով պարպել տալու համար:

Ասիկա եղաւ առաջին փորձառութիւնս թէ շատ անգամ տնօրէններ, ուսուցիչներ՝ պաշտօնեաներու տուած տեղեկութիւններուն վստահելով՝ անարդարօրէն սաները կը պատժեն, առանց լրջօրէն քննելու:

Առանց հաշուելու փոքր անհասկացողութիւններ, որոնք անխուսափելի են նոյնիսկ կազմակերպուած հաստատութիւններու մէջ, կեանքը հիանալի էր՝ մինչեւ որ տխուր օր մը հասաւ:

ԵՂԻԱ ՏԱՂԵԱՆ

Շաբաթական 13-էն

միջազգային, ընկերային, կրթական, քաղաքական, պատմական, գրական, արուեստի եւ այլ նիւթերու մասին ունէր իր հեղինակաւոր կարծիքները, որոնք համեմուած կ'ըլլային մէջբերումներով, կատակներով եւ ինչու չէ՞ քաղցրացող կենացներով:

Անյազ կարդացող էր, եւ չաճախ կը յանձնարարէր սա կամ նա գիրքը կարդալու վայելելու:

Իր ծննդեան եւ մահուան թուականին միջեւ գտնուող գծիկը կարճ էր բայց լեցուն: Իմաստուն մարդիկ

ըսած են, որ ապրած տարիներուդ թիւը այդքան կարեւոր չէ, որքան այդ տարիներու ընթացքին իրապէս ապրած կեանքը:

Եւ Եղիային կեանքին, այդ կարճ գծիկը հարուստ է ապրուած օրերով, շաբաթներով, ամիսներով եւ տարիներով:

Իր անժամանակ մեկնումով, Եղիա ծանր, բայց քաղցր պարտականութիւն կը դնէ իր կնոջ, աղջիկներուն, փեսաներուն եւ վերջն ալ թոռներուն ուսերուն՝ իր բարի գործերը շարունակելու:

Հողը թեթեւ, սիրելի Եղիա:

ԱՐԱՐԱՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆ

Շաբաթական 13-էն

DJ Neptune

Ելոյթ ունեցաւ Ուսումնական Խորհուրդի ատենապետ Դոկտ. Պերճուհի Գուքէեան, որ իր կարգին տեղեկութիւններ տուաւ դպրոցի հիմնադրման ու ներկայ խնդիրներուն վերաբերեալ: Ան մեծարանքով խօսեցաւ հիմնադիրներուն եւ գանտնք գլխաւորող Պրն. Գաբրիէլ Ինճէճիկեանի մասին, որոնց տեսլապաշտ յարատեւութեան ու նուիրումին արդիւնքը որակեց վարժարանը: Այս իրագործման գնահատական արտայայտութիւնն էր Լոս Անճելըսի քաղաքապետութեան պատուոյ գիրը որ Պրն. Ինճէճիկեանին յանձնուեցաւ՝ քաղաքապետութեան անդամ Պրն. Փոլ Գիրգորեանի կողմէ, որ նաեւ ունեցաւ յաւուր պատշաճի ելոյթ:

Խօսք տրուեցաւ դպրոցի տնօրէն Այտա Թադէոսեանին: Ան իր հպարտութիւնը յայտնեց՝ առաջին տարին իսկ 120 աշակերտներ համախմբող այսպիսի կարեւոր պատասխանատու յանձնառութեամբ վստահուած ըլլալուն համար: Ան շեշտեց տուն-դպրոց փոխադարձ սերտ կապի կարեւորութիւնը, եւ

ծնողները հրաւիրեց՝ մօտէն հետաքրքրուելու եւ մասնակցելու դպրոցական աշխատանքներուն:

Ծնողներու կողմէ ելոյթ ունեցաւ Հէրրի Զաքարեան, որ շնորհակալութեան ու վստահութեան զգացումները յայտնեց վարժարանի պատասխանատուներուն:

Մէջընդմէջ եղած նուիրատուութիւններէն գոյացաւ կոկիկ գումար մը՝ դպրոցի գանազան կարիքներուն հոգալու սահմանուած: Եղաւ մտավառութիւն եւ բաժնուեցաւ կարկանդակ՝ տօնելու համար վարժարանի հիմնադիր ու բազմավաստակ կրթական գործիչ Պրն. Գաբրիէլ Ինճէճիկեանի ծննդեան 80րդ տարեդարձը:

Փակման խօսքին մէջ, Տիկ. Հերմինէ Մահաթեան մէկ առ մէկ լիչեց եւ ողջունեց Արարատ Պայմանագրեալ Միութեան հիմնադիրներու, ուսումնական խորհուրդի եւ վարչական անդամներու անունները՝ շնորհակալութիւն յայտնելով անոնց:

Բարի երթ ու նորանոր յաջողութիւններ կը մաղթենք Արարատ Պայմանագրեալ Վարժարանին՝ «մինչեւ կատարն Արարատի»:

Ս.Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻ ԲԱՆԻ ՀՈԳՈՒ ԵՐԿԻՐԸ ՉԷ

Շաբաթական 14-էն

մաններում հիմնականը մնում է ամէն կերպ գոյատեւելու բարդացող խնդիրը, այնքան բարդացող, որ անգամ աղօթքների յետագիծն է շեղուած թուում, այնքան շեղուած, որ կասկածելի է՝ լսելի՞ են Նրան, ում ուղղուած են: Հոգան ու ուրախութիւնը անհամատեղելի են, որքան էլ ոմանք փորձ են ու փորձում են դրանք նույն հարթութեան վրայ ներկայացնել: Հոգաի, տառապանքի անատոմիան չեն շփոթի ոչնչի հետ, քանի որ հոգան ու տառապանքն են ստեղծում այն անտեսանելի վանդակները, որոնք սահմանափակում են մարդու հոգեւոր ու քաղաքացիական բոլոր իրաւունքներն ու ներառութիւնները: Աշխարհում ամէն ինչ իր սահմանն ունի, որքան էլ ոմանք երեւակայեն, թէ անսահման է իրենց

իշխանութիւնը: Իր սահմանն ունի նաեւ մարդկանց համբերութիւնը, պարզապէս հայի համբերութեան բաժակը սովորականից խորն է եւ դժուարութեամբ է լցւում, որովհետեւ նրա համար բոլոր պայմաններում էլ կեանքը շարունակուած է, եւ ամենագորշ կեանքն անգամ հակուած է դէպի լոյսն ու լուսաւորը... Հարկաւ, Նոր տարին սարերի հետեւում չէ, եւ Աստուած տայ, որ այն իսկապէս նոր լինի ոչ միայն հանդերձանքով, այլ նաեւ իր բովանդակութեամբ եւ մարդկային գոյութեան արժէքների նոր որակներով: Այնժամ գուցէ թէ կը կարեւորուի նաեւ ովկիանոսում լողացող մարդու լողի ճիշտ ուղղութիւնը....

Քանի որ եթէ ուղին ճիշտ է, հնարաւոր է, որ օրերից մի օր որեւէ մեկին յաջողուի տեղ հասնել:

ՔԱՁ ՆԱԶԱՐ ՌԻՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 380-րդ կայանից

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.
massisweekly.com
updated every Friday
ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

«ՄՐՑԱՇՐՋԱՆ-2010»

ԱՄԽԱՐՅԻ ԱԽՈՅԵԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿ ՏԻԳՐԱՆ Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ՝ ԳՅԱՍՏԱՆԻ ԼԱԽԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿ



Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան մարզական թեմայով գրող 47 լրագրողների հարցման արդիւնքում Մրցաշրջան-2010-ի լաւագոյն մարզիկ է ճանաչել ծանրամարտի աշխարհի ու Եւրոպայի ախոյեան Տիգրան Գ. Մարտիրոսեանին: Գիւմրեցի երիտասարդ ծանրորդը, որն այս մրցաշրջանում պոկում եւ հրում վարժութիւնների ընդհանուր հաշուով բարձրացրել է քաշից մօտ 5 անգամ աւելի ծանր ծանրաձող եւ արժանացել աշխարհի ախոյեանի կոչման:

ամրապնդել է 2801 նիշով: Տասը լաւագոյն մարզիկների շարքում են նաեւ, ոչ յատուկ դասաւորութեամբ, Աշոտ Դանիէլեանը (սամբո), Մելինէ Դաւրբեանը, Գէորգ Պօղոսեանը եւ Ռուբէն Ալեքսանեանը (բոլորը՝ ծանրամարտիկ) եւ Ռոման Ամոյեանը (յունահռոմէական ըմբշամարտ):

Ոչ մի ֆուտպոլիստ առանձին չի ընդգրկուել ցուցակում, քանի որ տեղի մարզական լրագրողներն ամբողջ հաւաքականն են ճանաչել 2010 թ. Հայաստանի լաւագոյն թիմ: Նոր գլխաւոր մարզչի՝ Վարդան Մինասեանի գլխաւորութեամբ Հայաստանն այս մրցաշրջանում,

սենսացիոն արդիւնքներ գրանցելով Եւրօ-2012-ի որակաւորման խաղերում, ՖԻՖԱ-ի վարկանիշային աղիւսակում զբաղեցրեց երբեւէ ամենաբարձր հորիզոնականը: 2010թ. Հայաստանի լաւագոյն թիմը ճանաչուել է՝ Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականը:

Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիայի ամէնակէս մրցանակին արժանացած 22-ամեայ Տիգրան Մարտիրոսեանը, որը յայտնի ծանրորդ Գէորգ Մարտիրոսեանի որդին է, Սեպտեմբերին Թուրքիայի Անթալիա քաղաքում անցկացուած ծանրամարտի աշխարհի առաջնութիւնում, հանդէս գալով 77 կգ քաշային կարգում, բարձր պահեց իր երկրի պատիւը:

Մարտիրոսեանի գլխաւորած 10 լաւագոյն մարզիկների ցուցակում ընդգրկուել են նաեւ, վարընթաց դասաւորութեամբ, շախմատի գրոսմայստեր Լեւոն Արոնեանը, յունահռոմէական ոճի ըմբշամարտիկներ Արսէն Զուլֆայակեանը եւ Եուրի Պատրիկեւը, սիրողական բռնցքամարտի Եւրոպայի ախոյեան Հրաչիկ Զաւախեանը եւ այլք:

462 միաւորով առաջին հորիզոնականը զբաղեցրած Մարտիրոսեանը մարզական կարիերայի ընթացքում իր ակտիւում գրանցել է օլիմպիական պրոնզէ, աշխարհի ոսկէ եւ արծաթէ, Եւրոպայի ոսկէ եւ արծաթէ մետալներ: 399 միաւորով երկրորդ հորիզոնականում յայտնուած Արոնեանն անցնող մրցաշրջանում նոյնպէս փայլուն յաջողութիւններ ունեցաւ՝ դառնալով աշխարհի վեց գրոսմայստերներից մէկը, որ երբեւէ կարողացել է յաղթահարել ՖԻԴԵ-ի 2800 վարկանիշը: ՖԻԴԵ-ի աշխարհի վարկանիշային ցուցակի լաւագոյն գրոսմայստերների շարքում Արոնեանը իր տեղն

ԱՄԱՆՈՐԻ ԸԱՇԿԵՐՈՅԹ ԽՐԱԽՃԱՆՔ



Խանդավառութեամբ՝ UNEEK ENTERTAINMENT

DJ Սազո

Կադանդ Պապա, փոքրիկներու նուէրներ, ճոխ յայտագիր եւ անակնկալներ 31 Դեկտեմբեր 2010 - Երեկոյան Ժամը 8էն սկսեալ Կարօ Սողանալեան սրահէն ներս 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքի նուէր \$50 (\$25 5-12 տարեկան Փոքրիկներու) Հեռաձայնել (626) 497-5111 Քնարիկին

NEW YEAR'S EVE

Dinner Dance

Music performed by UNEEK ENTERTAINMENT

DJ Sako

Entertaining program with many surprises Santa Claus, gifts for children, December 31, 2010, starting at 8 pm.

Garo Soghanalian Hall

1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Donation: \$50 (\$25 for children)

Please call (626) 429-8366 Dzovig

